№ 87 ԿԻՐԱԿԻ, 26 ԱՊՐԻԼԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 26 ԱՊՐԻԼԻ № 87

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ՍՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 2—53

ՀԻՄՆԱԴԻՐ ԴՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՏԻՍԻ 1-Ի Ց ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 7 ՐՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. նամակագրոշմերի խընդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պեռիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

Պրէմիաներ «ՄՇԱԿԻ» տարեկան բաժանորդները, օրենք 1915 թ. ընթացքում լրիւ վճարած կանենան 10 ր. բաժանորդավճարը, կը ստանան որպէս պրէմիա հետևեալ նոր լոյս տեսնելիք գրքերը. 1) «Ծանչվածը»—մեծ վէպ Շահրիարի հայկ. յեղափոխ. կեանքից, 2) «Հայկական հարցը»—լուսաբանված դոկումենտներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՏՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Սօֆիա Կարապետեան ՂԱԶԱՉԵԱՆԸ իր որդիների հետ միասին, անհուն վշտով յայտնում է իր բարեկամներին և ծանօթներին իր պաշտելի և անմոռանալի դստեր՝ Պետրօգրադի կանանց բարձրագոյն կուրսերի ուսանողուհի

ԱՍՏՂԻԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԵԱՆ ՂԱԶԱՉԵԱՆԻ

վաղաժամ մահվան մասին, որ տեղի ունեցաւ ապրիլի 18-ին։ Յուղարկաւորութիւնը այսօր, կիրակի, ապրիլի 26-ին, առաւօտեան ժամը 10-ին բնակարանից (Գուդովիչի փողոց № 9) դէպի Զգաշէնի եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ Խնդրվում է պակներ եւ ծաղիկներ չը դնել դագաղի վրա։
255. 2—2

Շողակաթ Կարապետեան ՄՈՒՐԹԱՖԵԱՆԸ իր կուսակիցների և թոռների հետ միասին խորին կսկիծով յայտնում է իր բարեկամներին և ծանօթներին իր թանկագին թոռան՝ Պետրօգրադի կանանց բարձր կուրսերի ուսանողուհի

ԱՍՏՂԻԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԵԱՆ ՂԱԶԱՉԵԱՆԻ

վաղաժամ մահվան մասին, որ տեղի ունեցաւ ապրիլի 18-ին։ Յուղարկաւորութիւնը այսօր, կիրակի, ապրիլի 26-ին, առաւօտեան ժամը 10-ին բնակարանից (Գուդովիչի փողոց № 9) դէպի Զգաշէնի եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։
256. 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

Ապրիլի 28-ին, երեքշաբթի երեկոյեան

Ռուսաց Դրամատիկական խումբը կը ներկայացնէ

ԱՐԾՈՒԻԿ

Ռուսերէն։

Մասնակցութեամբ ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶԵԱՆԻ, որը կը խաղայ ԱՐԾՈՒԻԿԻ դերը հայերէն լեզուով։
առ. 251. 3—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎՐԱՆԻ ԱՄԱՐԱՑԻՆ ՇԷՆՔ

Կիրակի, ապրիլի 26-ին 1915 թ.

ՅՕԳՈՒՏ ԿՈՒԿԻԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԾԽ. ԴՊ. ՀԲԱՒՈՐ ԱԲԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ

կը կայանայ

ԳԱՐՆԱՆԱՑԻՆ ՄԵԾ ԶՐՕՍԱՆՔ

բաղմակողմանի և հետաքրքրական ծրագրով. ՊԱՐ. երգեցողական և ասիական երաժշտութիւն։ 10%-ը յատկացվում է յօգուտ պատերազմից վնասվածների։
Սկիզբը ցերեկ. ժամը 4-ին։ ◆◆ Մուտքը մեծերի համար 25 կ., փոքրերի՝ 15 կ.
Վատ եղանակի դէպքում զբօսանքը յետաձգվում է մայիսի 6-ին։
առ. 254. 2—2 Կարգադրիչ՝ տիկ. Մ. Ե. Միլեան

Առաջիկայ մայիսի 6-ին ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ 25-ամեայ յօբելեանի 25-ամեակը լրանում է և այս առիթով լոյս կը տեսնի մայիսի 5-ին շքեղ մինիատիւր յուշիկ յօբելեարի պատկերներով և նկարներով—

1890 ՔՍԱՆՀԻՆԳԱՄԵԱԿ

XXV ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ XXV

Քսանհինգամեայ յօբելեանի 1915

ԳԻՆԸ 50 ԿՈՊԷԿ։

«ՄՇԱԿԻ» բաժանորդների համար (եթէ գրամի հետ ուղարկեն և իրանց տպած հասցէները, որով «ՄՇԱԿ» են ստանում) մինչև մայիսի 3-ը գինը 30 կոպ., այնուհետև անխտիր ամենքի համար 50 կ.։ «ՄՇԱԿԻ» գաւառական բաժանորդները կարող են ուղարկել հաւաքական հասցէ, դրամը՝ պօստային մի փոխանագրով։

Դիմել՝ Тифлисъ, БЮРО ПЕЧАТИ. Головинскій пр. 41.

Ապատիկ եւ վերադիր վճարով պատուէրներ չեն ընդունվում։
առ. (ա. օ.) 13. 5—4

Կ. Հ. Բ. ԸՆԿ. ճաշարանների վարչութիւնը

ստացել է ՄՈՒՐԹԱՖԵԱՆ ընտանիքից ԱՍՏՂԻԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԵԱՆ ՂԱԶԱՉԵԱՆԻ դագաղի վրա պսակ դնելու փոխարէն 50 ռուբլի ԵՐԿՈՒ ՕՐ ՁԳԱԻՈՐՆԵՐԻՆ ՃԱՇ ՏԱԼՈՒ համար։ Վարչութիւնը որոշել է այդ ճաշը տալ կիրակի և Համբարձման օրերը։
առ. 1—1

ԲԺԻՇԿ

Շուշանիկ Նարարեան

(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)։

Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. 12½—2. (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սելալակ, Բարեշչեվսկայա փ. № 1
Հեռախօս 10—58.
(Ե.Հ.Կ.) առ. 784. 100—90

ԲԺԻՇԿԱՊԵՏ

Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

Նախկ. օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստ. պրոֆ. Պօզնէրի։

Նախկին տարիների նման կընդունէ հիւանդներին մայիսի 1-ից Կովկասի հանքային ջրերում՝ Պեատիգորսկում, Ելիզավէտինսկայա փողոց, տան Արխիպովի, ռուսաց սօրօրի դիմաց, տէլէֆ. № 276։
առ. (ե. հ. կ.) 248. 30—1

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ

Ա. Ա. Ե. Մ. ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԴԱՐՁԱԿ ՄԻՋՈՑՆԵՐ, ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ և ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆՆԵՐ.
ՊԵՏԱՏԻԳՕՐՍԿ.—Սեզօնը մայիսի 1-ից մինչև սեպտեմբերի 15-ը։ ԾԾՄԲԱՑԻՆ ՋՐԵՐ յօդացաւի, սիֆիլիսի, կաթուածի, կաշաւոնի և այլ հիւանդութիւնների դէմ։ ԵՍԵՆՏՈՒԿԻ.—Սեզօնը մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 15-ը։ ԱԼԿԱԼԵԱՆ ՋՐԵՐ մարսողութեան խանգարման, ստամոքսաղիքի և աղիքաղիքի, լեարդային հիւանդութիւնների և այլոց դէմ։ ԺԵԼԵԶՆՈՎՈՎՈՒՍԿ.—Սեզօնը մայիսի 10-ից մինչև հոկտեմբերի 15-ը։ ՀՈՂԱՑԻՆ ՋՐԵՐ արեան պակասութեան, կանանց զանազան հիւանդութիւնների, երիկամունքային և լեարդային հիւ. դէմ և այլն։ ԿԻՍԼՈՎՈՎՈՒՍԿ.—Սեզօնը՝ ամարայինը յունիսի 1-ից մինչև հոկտեմբերի 15-ը, իսկ ձմերայինը հոկտեմբ. 15-ից մինչև յունիսի 1-ը։ ԱԾԽԱԹԻՒՏԱՑԻՆ ՋՐԵՐ ուժասպառութեան, ստամոքսային մի քանի հիւանդութիւնների, ջղային, կանացի և այլ հիւանդութիւնների դէմ։

Հանքային ջրերի բոլոր տեղերում վաննաները կարելի է ստանալ մայիսի 1-ից։ Զուտնեսը հիւանդներին արտօնութիւն է տրվում բժշկելու սեզօնի առաջին և վերջին ամիսներում։

Ջրեր վաննաների եւ խմելու համար, հիդրոպատիկ հիմնարկութիւններ, ցեխաբուժութիւն, բժշկութիւն ինգալեացիաներով, Նարզանի ածխաթթուաւոր գազով. կումիս, կէֆիր, մասաժ, էլեքտր. և լուսաբուժութիւն, արեգակնային վաննաներ, բժշկական մարմնամարզութիւն քան ծանրքերի, բէնդգէնօսկոպիա, բէնդգէնօսէրապիա, ըստիլ։ Զանազան մասնագէտ-բժիշկներ (մօտ 800)։ Եկեղեցիներ 40,000 հոգուց աւելի է։ Էլեքտրաքարշ և լուսաւորութիւն, սանատորիաներ, բաժարաններ, հիւրանոցներ, կաֆէներ, ճաշարաններ, ընթերցարաններ, ճեմելիքներ, ծաղկանոցներ, հրապարակներ՝ մանկական խաղերի համար, զբօսանքներ, լեռնային էկսկուրսիաներ, թատրոններ, սիմֆոնիական երաժշտախմբեր։ Մանրամասն տեղեկութիւնները ուղեցոյց-գրքի և յատուկ բրոշիւրների մէջ։

Տեղեկութիւնների համար դիմել՝ въ Управленіе водъ въ Пятигорскѣ.
(կ.) առ. Г. 3—1

ԱՄԱՐԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

(Բժ. Կարապետեանի այգի Միքայէլեան փ. 65)

Այսօր, կիրակի, ապրիլի 26-ին կը ներկայացվի յայտնի ուրախ կոմէդիա

I

ԽԱՆՈՒՄ

3 գործողութեամբ։

III արարուածում—Հարսանիք, պար ու զոռ։

Կուպլէտներ—դուդուկով։

Մասնակցում են.—ա. ա. Գուլազան, Մանուչարեան, Սաթենիկ, Սօֆի-Վարդիթեր, պ. պ. Անտանան, Բէգիլանեան, Գրիգորեան, Յարութիւնեան Փիրուզեան և ուր.։

II

ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ

Նոր ծրագիր՝ ցնցող դրամա 3 մեծ բաժնով։ Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։ Այգում ասիական երաժշտախումբ ժ. 7-ից։ Տեղերի գները մուտքի հետ միասին 25-ից մինչեւ 80 կոպէկ։

Կարգադրիչ՝ Գ. ՓԻՐՈՒՄԵԱՆ

ԱԶԴ.—Պատրաստվում է նոր պիէս՝ «Դրամատիկական վարչութեան անդամ»։
առ. 259. 1—1

ՎՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, տէլէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ճեռբին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (ստաціոնարъ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք զրվելու պայմանով։

Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան
Ե. Ե. Վեսելով զօրով
Վ. Ա. Զակրժեվսկի
Հ. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նօսիցկիյ
Գ. Ե. Տէր-Ներսէսեան
Ա. Ռ. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց
(Ե.Կ.) առ 970. 100—49

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԵՐԻ ՄԱՍԻՆ

(Սեփական հեռ.)

Զուլֆա, 24 ապրիլի

Ստացված հաստատ տեղեկութիւններից երևում է, որ Վանի հայերը ընտանիքներով ապաստան են գտել ամերիկական միսիայում, որին նոյնպէս վտանգ է սպառնում։

Հայերը հերոսաբար պաշտպանվում են և դրսի օգնութեան սպասում։

Ջաւիդ փաշան անընդհատ ռմբակոծում է քաղաքը։

Քաղաքը պաշարված է քիւրդական հրոսակախմբերով։

Կանոնաւոր զօրքեր չը կան։

Վանի շրջակայ գիւղերը գըլխովին սրի են քաշված։

Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել պաշարվածներին փրկելու, որոնց համար վերահաս է վճռական և ճակատագրական րոպէն։

Իշխանը սպանված է, իսկ Վռամեանը աքսորված։

Առաքելեան

—

(Սեփ. թղթակցից)

Դիարբէքիր, 12 ապրիլի

Բոլոր իմ քաղած տեղեկութիւններից պարզ է արդէն, որ ամբողջ Վանի վիլայէթը այրվում է։ Միակ հայաշատ կենտրոնը՝ Վան՝ թիւրքերը վճռել են արդէն հասցնել Բայազիդի սանջակի օրին։ Բոլոր հայ գիւղերից, վաղօրօք կազմած ծրագրի համաձայն, զինւորական պէտքերի համար աշխատեցնելու պատրուակով հաւաքում են արական սեռը և խմբերով հրացանի բռնում գիւղերից հեռու։ Այդ սոսկալի դաւը միայն պարզվում է չորրորդ օրը, և այդ օրից սկսվում է փախուստը։ Գործն սկսվել է ապրիլի 4-ից։ Փախստականները սոսկալի դէպքեր են պատմում։ Ես հրաժարվում եմ գրի առնել այդ նկարագիրները, որովհետև սովորական բաներ են դարձել Եւրոպայի համար։

Վանից ստացված տեղեկութիւնների համաձայն, այդ քաղաքն անցել է հայերի ձեռքը, որոնք դիմադրում են և սպասում մեր տղերանց և հզօր Ռուսաստանի զօրքերին։ Քիւրդերը հաղարներով շրջապատել են Վանը, բայց ներս չեն կարողանում մտնել։

Թիւրքերը շրջապատել են Զէյթունի շրջանը, բայց հարուածներ են ստանում. այժմ միայն անհրաժեշտ է օգնութիւն քան երբևիցէ։

Արզար Պայազատ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

—

Զուլֆա, 24 ապրիլի

Հասայ Խօյ, որպէս քաղաքների դաշնակցութեան ներկայացուցիչ ներկայացայ գեներալ Զերնօզուբովին։ Նա ցոյց տուեց սրտագին ընդունելութիւն թոյլատրելով քաղաքների միութեան ընծաները զինւորներին բաժանել։

Առաքելեան

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

24 ապրիլի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Օլթիի ուղղութեամբ մեր զօրքերը չափազանց ետ մղեցին թիւրքերին Սիվրիչայ գետի շրջանում, ուր հանեցին նրանց ամրացված դիրքերից։

Ալաշկերտի հովտում մեր հեծելազօրը աջող ընդհարում ունեցաւ քիւրդերի հետ։

Մնացած զօրաճակատում փոփոխութիւն չը կայ։

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՐԴԱՆԵԼՈՒՄ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

23 ապրիլի

ԼՕՆԴՕՆ. — Համանքների պաշտօն։ Ասկվիթը, խօսելով Դարդանէլում կատարվող դէպքերի մասին, նկարագրեց այն ռազմական գործողութիւնները, որոնք կապ ունեն դաշնակից զօրքերին 6 կէտում ցամաք իջեցնելու հետ, և կանգ առաւ աւելի մանրամասնաբար Սէդիլ-բահրի մօտ ափ իջած գումարտակի գործողութիւնների վրա։

Այդ գումարտակի առաջապահ զօրամասերը, որոնց տեղաշարժումները արդէն լրի էին հանդիպում ամբողջ օրվայ ընթացքում, դրաւեցին մի շարք բարձրաւանդակներ, որով ապահովեցին լաւ դիրք գումարտակի մնացած զօրամասերն ափ իջնելու գործողութիւնները ծածկելու համար։

Աւստրալիական և նոր-զէլանդական զօրաբանակները ուժեղ թնդանօթաձգութեան պաշտպանութեամբ աջողութեամբ յարձակումներ էին գործում Կարա-թէփէի լանջերի վրա։ Փայլուն կերպով կատարելով այդ գործը, նրանք վանում էին թշնամու բոլոր հակայարձակումները և յամառութեամբ առաջանում էին։ Ցամաք իջած զօրքերը ամենուրեք հանդիպում էին խութերի և ենթարկվում էին անընդհատ շարունակվող խիզախ յարձակումների, որոնք սակայն վանվեցին թշնամու համար ծանր կորուստներով։

Սէդիլ-բահրի մօտ ցամաք իջած գումարտակը գրաւ թիւրքական դիրքը, որ լի էր խուրերով ու ժայռերի բեկորներով, և առաջացաւ 5 մղոն։ Ներկայումս գումարտակը կայուն դիրք է բռնել թերակղզու լայնութեամբ։

Մինչև ապրիլի 19-ը անգլօ-ֆրանսիական զօրքերը կրկին առաջացել էին թերակղզու հարաւային վերջաւորութեան վրա։

Ասկվիթը յարակցեց, որ գործողութիւնները շարունակվում են, զարգանալով ամենանպաստաւոր պայմաններում։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Համաձայն Կ. Պոլսից հէնց այժմ ստացված տեղեկութիւնների, Դարդանէլի 5-րդ զօրաբանակի հրամանատար Լիման-ֆոն-Սանդէրսը և նրա շտաբը, որ իր բնակավայր ընտրել էր Գալիպոլի քաղաքը, հեռացել են վերջինից, որովհետև նա ենթարկվեց դաշնակից նաւատորմի ռազմանաւերի ուժեղ ռմբակոծութեան։ Նրանք գլխաւոր բանակատեղին փոխադրել են Բօզքոստ՝ Մարմարա ծովի վրա։

Դարդանէլից շարունակ Պոլիս են գալիս շոգենաւեր վիրաւորներով, որոնց թիւում կան շատ գերմանացի օֆիցէրներ։ Վիրաւորների թիւը հաշւում են 15,000։ Ընդամենը Դարդանէլում սպանվել և վիրաւորվել են աւելի քան 70,000 հոգի։

ԼՕՆԴՕՆ.—Կահիրէից հաղորդում են, որ անգլիացիների դիրքերը Սարի-բահրում գրաւված են հաստատ։ Թշնամու բոլոր յարձակումները դիւրութեամբ վանվել են։ Գերման օֆիցէրները մրցակներով և ատրճանակներով քշում էին թիւրքերին դէպի յարձակում, բայց վերջինները շարունակ փախուստի էին դիմում սուլինային կռիւներից։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

23 ապրիլի

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Կ. Պոլսից տեղեկացնում են. «Զը նայած, որ թիւրքական կառավարութիւնը կամենում է ծածկել ազգաբնակութիւնից Կ. Պոլիս բերվող անագին թիւով վիրաւորներին, նա հարկադրված հրաժարվեց այդ ուղղութեամբ

որևէ քայլ անելուց։ Բոլոր կառքերը և էլեքտրաքարշի վագոնները գրաւված են վիրաւորներին լազարէթները և լազարէթների վերածած մեծ հիւրանոցները տեղափոխելու համար։ Այդ վիրաւորների խմբերին տեղափոխելու գործողութիւնները ճնշող ազդեցութիւն են գործում ազգաբնակութեան վրա, մանաւանդ որ Դարդանէլում տեղի ունեցած կռիւների մասին պաշտօնական հաղորդագրութիւնների մէջ ասված է, թէ թիւրքերի կողմից վիրաւորված են մէկ կամ երկու հոգի։ Ոստիկանութիւնը ձերբակալեց բոլոր անգլիական, ֆրանսիական և ռուսական խանութների այն տէրերին, որոնք իրանց հաստատութիւնները փակել էին սուլթանի գահակալութեան օրը։

Նոր ոյժով վերսկսվեցին հայերի ձերբակալութիւնները։

Էրզրումից հաղորդում են, որ գերմանցի 2 օֆիցէր սպանվել են թիւրք վիլայէթների ձեռքով։

—

(Հրագիրներից)

✦ «Б. В.»-ին հեռագրում են Զուլֆայից, որ զինուորական մասնագէտները Դիլմանի մօտ տեղի ունեցած գործողութիւնները համարում են բացառիկ թէ ռազմագիտական, թէ տակտիկայի և թէ ձեռք բերված հեռանքի տեսակէտներից։

✦ Հազար հոգուց բաղկացած յունական մի զօրախումբ պատրաստ է մեկնել Դալիպոլի թերակղզին։

✦ Սեվաստոպոլից հեռագրում են, որ ռուսաց նաւերը բռնել են թիւրքական մի նաւ, որը Բուլգարիայից Կ. Պոլիս էր տանում պատերազմական կօնտրաբանդ։

✦ Կ. Պոլսում սաստիկ յուզում է տիրում Բոլգարիայի արարքի առիթով, որը մտադիր է հանդէս գալ այս օրերս։

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—

(Վերջին հաղորդագրութիւն)
25 ապրիլի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Ապրիլի 23-ին Օլթիի ուղղութեամբ մեր զօրքերը շարունակում էին նեղել թիւրքերին Սիվրի-չայ գետի և Թորթում-գեօլ լճի շրջանում, ուր մերոնք դերի վերցրին 8 թիւրք օֆիցէր և մի վաշտ ասկէրներ։

Ալաշկերտի հովտում, Կարաքիլիսէից դէպի հարաւ-արևելք, տեղի ունի ոչխարոշ ընդհարում։

Ատրպատականում, Դիլմանի շրջանում, տեղի ունի մեր առաջապահ հեծեալ մասերի ընդհարում թիւրքերի հետ։

ԹԻՒՐՔԱՑ ԲԱՆԱԿԻ ՏԻՈՒՐ ՎԻՃԱԿԸ

—

«Corriere della Sera»-ի Թղթակիցը նը-կարագրում է թիւրքաց զօրքի ողբերգական դրութիւնը։

«Այդ զօրքերը սաստիկ վատ վիճակի և վատ տրամադրութեան մէջ են։ Արևելեան և արևմտեան զօրաճակատների պարտութիւնը խիստ կերպով է ազդել նրանց վրա։

«Արևմտեան Հայաստանը ծխի մէջ է։ Քաղաքները վերածված են հիւանդանոցների և գերեզմանատների։

«Տրապիզօնը կիսով չափ քանդված է. բնակիչները փախչում են հաղարներով։

«Թիւրքերի կորուստը անկարելի է հաշուել։ Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, ընկել է 60,000 մարդ։ Սանմանամերձ թիւրք ազգաբնակութիւնը չէ հաւատում այդ լուրերին։ Նա ենթադրում է և հաւատացած է, որ աւելի մեծ թիւ է ընկած, և այդ պատճառով նրա մէջ աճում է մի արտաքին դէպի կառավարութիւնը, որ սա այդպիսի մի անմիտ քայլ արեց ձմեռվայ կիսին և զօրքերը ջարդել տուեց։

«Արևելեան Հայաստանին, բացի կոտորածից, սով է սպառնում։ Այդտեղ հետզհետէ պակասում են անհրաժեշտ մթերքները՝ շաքարը, նաւթը և այլն։ Իսկ հացը սպառվելու վրա է։

«Բոլոր քաղաքներում ճարակում են տիֆը, սովը, խոլերան։ Տիֆից մանաւանդ շատ մարդ է մեռնում»։

ՄԻԼԻՒԿՈՎԸ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՄԱՍԻՆ

—

Մօտ օրերս Պ. Ն. Միլիւկով Մոսկվայում խօսեց մի դասախօսութիւն «Թիւրքիան, Կ. Պոլիսը և նեղուցները» թեմայով, օրի մասին տպված է «Рус. Вѣд.»-ում։

Պ. Ն. Միլիւկովը Թիւրքերի Եւրոպայում մնալը համարում է օրպէս պատմական մի պատահականութիւն, որպէս հակաբնական մի երևոյթ։ Այդպէս է եղել նա հէնց սկզբից, 500 տարի առաջ. այդպիսին շարունակել է մնալ այնուհետև երկար ժամանակ։ Ի զուր չէ, որ թիւրքերի Եւրոպա գալու հետ միաժամանակ՝ ծնվեցին և Թիւրքիան բաժանելու ծրագիրները, որոնք այնուհետև չընդհատվեցին։ Բումինացի մի բանաբեր «Թիւրքիան բաժանելու ծրագիրներ հաշուում է 100 հատ»։

Միլիւկովը սուլթան Աբդուլ-Համիդին համարում է Թիւրքիայի սիմվոլը, թէ ինչպէս Աբդուլ-Համիդի մէջ էր հեռզհետէ մեռնում կեանքը, այնպէս էլ մեռնում էր նրա Թիւրքիայի կեանքը։ Միայն մահը մի քիչ երկարում էր։ Եւ վերջապէս հասաւ այդ ըսկէն էլ։ Պատմութիւնն այդ վաղուց էր պատրաստում։ Այժմ արդէն չը պէտք է ետ դառնալ և թողնել վճիռը։

Բայց հէնց այժմ Ռուսաստանին անհրաժեշտ է, օրպէսզի չը կրկնի Գերմանիայի դէրը, իր դէմ չը յարուցի պետութիւնների նոր խմբի հակառակութիւնը։ Ռուսաստանը պէտք է Կ. Պոլիս գնայ իր ազգային շահերը իրականացնելու, բայց ոչ ազգային ցնորքներով։ Այդ ցնորքներից մէկը հետևեալն է. Պոլիսը դարձնել համասլաւոնականութեան ֆեդերացիայի կենտրոն՝ Ռուսաստանի գլխաւորութեամբ։ Ամբողջ պատմութիւնը դէպի այդ ֆեդերացիան չի ձգտում։ Դրա մասին երազը վտանգներ է սպառնում ոչ միայն մեր Եւրոպայի հետ ունենալիք յարաբերութիւններին, այլև մեր՝ դէպի սլաւոնականութիւնը ունեցած յարաբերութիւններին։ Այդօրինակ ֆեդերացիայի օրգանիզմը չի կարող առողջ լինել։ Երկրորդ ցնորքն է՝ Կ. Պոլիսը լինի ուղղափառութեան կենտրոն, լինի ինչպէս «երրորդ Հռոմ»։

Դասախօսը մանրամասն քննութեան է ենթարկել այն բոլոր դժուարութիւնները, որոնք կապված են այդ երազի իրականացման հետ։

Զը պէտք է նաև մտածել, որ Կ. Պոլիսը այժմ էլ մնում է համաշխարհային առևտրի կենտրոն։ Եթէ երբեմն Նապոլէօնը իրաւունք ունէր ասելով, թէ «եվ տիրի Կ. Պոլսին, կը կառավարի աշխարհը», այժմ արդէն այդ ասֆորիզմը կորցրել է իր ճշմարտութիւնը։ Կ. Պոլսի առևտրի համաշխարհային նշանակութիւնը և նրա համար համաշխարհային մրցութիւնը հեռացել են նրանից։ Ոչ թէ իր համաշխարհային պատմական և համաշխարհային առևտրական նշանակութեամբ է հարկաւոր մեզ Կ. Պոլիսը, այլ նա մեզ հարկաւոր է որպէս բանալի մեր տան համար, ինչպէս արտայայտվել է Ալէքսանդր I. Նեղուցներին տիրելով, մեր սև-ծովեան ափերը դառնում են ապահովված վայրեր։ Ահա նեղուցներին տիրելու հիմնական խնդիրը։ Իսկ Կ. Պոլիսը ինքը միայն դրանց հետ անցնում է մեր ձեռքը։ Եւ այդ անցումը անխուսափելի է։

Պ. Ն. Միլիւկով այնուհետև ուշադրութիւն է դարձնում նեղուցները չէզոքացնելու ծրագիրների վրա և օրոշում այն չափը, որով թոյլատրելի է այդ չէզոքացումը։ Նա պէտք է միայն այնպէս լինի, որ չը վիրաւորի ոչ ռուսների սուվերենիտէտը՝ նեղուցների վրա, ոչ էլ Ռուսաստանի իրաւունքը այդտեղ ամրութիւններ շինելու։ Միայն այն ժամանակ մենք կը ստանանք իսկական «բանալին»։

Շատ անգամ ուրիշների համար աշխատելով, որ ելք ունենան դէպի բաց ծովը, որ ազատ լինեն, Ռուսաստանը ամեն տեսակ հիմք ունի իրագործելու և իր նպատակը, այն է՝ ազատական նպատակը։ Եւ այդ այնքան ճիշդ է, որ մենք, վերացնելով մեր պատմական հարցը այդտեղ, մենք դրա հետ միասին արմատ ենք նետում Եւրոպայի մարմնի վրա եղած վէրքը՝ արևելեան խնդիրը։ Սա—մեր վերջին պահանջն է Եւրոպայից, և այդ՝ Եւրոպական խաղաղութեան հաստատուն լինելու շահերի տեսակէտից։

ԹՈՒՐՔԻԿ ՄՏՔԵՐ
XV

Ինչպէս յայտնի է պատմութիւնից, Մերձերկրական ծովի արևելեան մասը՝—այն անկիւնը, որ կազմում են հիւսիսից, հարաւից ու արևելքից պատող երկիրները եւ ելք գլխաւոր մայր ցամաքների՝ Եւրոպայի, Ասիայի և Աֆրիկայի—ներկայումս՝ XX դարի շեմքում բոլորում է իր հազարդարեան անցեալի մի նոր պատմական շրջանը, որ բանալու է համամարդկային պատմութեան մէջ մի նոր դարաշրջան։ Եւրոպական առաջնակարգ հզոր պետութիւնները իրանց զօրքերով ու նաւատորմիղով արշաւում են Դարդանէլի ու Բոսֆորի վրա, այսինքն այն նեղուցների վրա, որոնք ամենահնագոյն ժամանակներից կաւախնձոր են եղել ասիական ու եւրոպական պետութիւնների միջև։ Այդ նեղուցներն են մի կամուրջ, որով անցել են հին ժամանակներից շատ ազգութիւններ Առաջաւոր Ասիայից դէպի Եւրոպա և հակառակը։ Այդ նեղուցների շուրջը բոլորած երկիրներն ու ազգութիւններն ենթարկվել են հնադարեան անցեալում տեղական, լեզուական և ազգային ամեն տեսակ փոփոխութիւնների, որոնց հետևանքն է այն բազմերանգութիւնը, որով աչքի է ընկնում այժմ վերոյիշեալ երկիրների տէր Թիւրքիան։

Դեռ Քրիստոսի ծնունդից շատ և շատ առաջ, մի քանի հազար տարիներ առաջ հին Ելլադայից սկսվեց Արգոնաւտների արշաւանքը դէպի Սև-ծովն և Առաջավայր Ասիայի ծովեզերեայ երկիրները։ Քրիստոսի ծնունդից մօտ 2000 տարի առաջ տեղի ունեցաւ Տրոյադայի նշանաւոր պատերազմը հէնց այն վայրերում, ուր ներկայումս դաշնակից պետութիւնները ասիական ծովափի վրա առաջ են խաղում թիւրքաց զօրքի դէմ։ Ելլադայի բոլոր թագաւորութիւնները դաշն կնքեցին և միացեալ զօրքերով արշաւեցին ծովով Փոքր Ասիայի հիւսիս-արևմտեան անկիւնում գտնվող Տրոյադայի թագաւորութեան վրա։ Փոքր Ասիայի թագաւորութիւններն ևս միացան յոյների դէմ պատերազմելու համար Տրոյադայի հետ։ Դրանց թիւումն էր նաև հայոց արքայ Զարմայրը։

Ինչպէս յայտնի է, յոյները յաղթեցին և Տրոյադան քայքայվեց։ Յետապայում Ալէքսանդր Մակեդոնացին Յունաստանին տիրելուց յետոյ անցաւ Փոքր Ասիա, և առաջին ճակատամարտը Փոքր Ասիային իշխող հզոր Պարսկաստանի զօրքերի հետ տեղի ունեցաւ Փոքր Ասիայի հիւսիս-արևմտեան անկիւնում։ Գրանիկ գետի հովտում, այսինքն ներկայ պատերազմական վայրերի շրջանում։

Առաջաւոր Ասիայից ևս տեղի է ունեցել շարժում դէպի արևմուտք նեղուցների վրայով։ Օրինակ պարսկական թագաւորութեան ամենածաղկեալ շրջանում, երբ ամբողջ Փոքր Ասիան և Եգիպտոսը պարսկական իշխանութեան տակ էին, պարսից Քսէրքսէս արքան կամեցաւ իշխել նաև Յունաստանի վրա։

Քսէրքսէսը մեծաքանակ զօրքերով անցաւ Փոքր Ասիայից Եւրոպական ափը, սակայն այդ արշաւանքը վերջ ի վերջոյ ունեցաւ անհաջող վախճան։ Յոյները յաղթեցին։ Յետագայում հռոմէական, ապա բիւզանդական կայսրութիւնը տիրում էր նեղուցների երկու կողմը գտնվող ասիական և եւրոպական ափերին և մի շարք արշաւանքներից յետոյ իր տիրապետութիւնը ընդարձակել էր մինչև պարսից պետութեան սահմանները։

Վերջում մահմեդական պետութիւնը նուաճեց նեղուցները ու Պոլիսը, այն է 1453 թուականից մահմեդական օսմանեան պետութիւնն է իշխում քաղաքակրթութեան օրրան Առաջաւոր Ասիայի և նեղուցների շուրջը գտնված երկիրների վրա։ Եւ ահա այդ հրաշալի երկիրը, օժտված բնութեան ամեն տեսակ բարիքներով, 462 տարի գտնվում է կրօնական ֆանատիկոսութեան և ցեղային բարբարոսութեան լծի տակ։ Երկիրը 462 տարի շարունակ հեծում է. իսկ քաղաքակրթ ազգերն այժմ վերջ են ուզում տալ և փրկել մարդկութեան քաղաքակրթութեան օրրանը, աշխարհիս ամենագեղեցիկ երկիրներից մէկը՝ մարդկութեան կեղտից և ապականութիւնից, որ ներկայացնում է իրանից մահմեդական Թիւրքիան։

Ա. Նազարէթեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԲԵՍԿՐԻՊՏ

—

(Պետ. Հեռ. Գործ.)
24 ապրիլի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Միտավայի շրջանում մեր զօրքերը շարունակում են ետ նեղել հակառակորդին։

Մլավայի ուղղութեամբ մենք շարունակեցինք մեր աջող գործողութիւնները։ Ապրիլի 23-ին մենք գրաւեցինք Մարցիշէ և Գրժիմկի գիւղերը և վանեցինք այդ շրջանում հակառակորդի երեք հակայարձակումը։

Գերմանացիք անպտղի փորձեր արին խլելու մեր գրաւած Պօմեռանը։ Ապրիլի 23-ին հակառակորդը չանաց անցնել Նարեւ գետը։ Բոլոր կառքերը և էլեքտրաքարշի վագոնները գրաւված են վիրաւորներին լազարէթները և լազարէթների վերածած մեծ հիւրանոցները տեղափոխելու համար։ Այդ վիրաւորների խմբերին տեղափոխելու գործողութիւնները ճնշող ազդեցութիւն են գործում ազգաբնակութեան վրա, մանաւանդ որ Դարդանէլում տեղի ունեցած կռիւների մասին պաշտօնական հաղորդագրութիւնների մէջ ասված է, թէ թիւրքերի կողմից վիրաւորված են մէկ կամ երկու հոգի։ Ոստիկանութիւնը ձերբակալեց բոլոր անգլիական, ֆրանսիական և ռուսական խանութների այն տէրերին, որոնք իրանց հաստատութիւնները փակել էին սուլթանի գահակալութեան օրը։

Նոր ոյժով վերսկսվեցին հայերի ձերբակալութիւնները։

Էրզրումից հաղորդում են, որ գերմանցի 2 օֆիցէր սպանվել են թիւրք վիլայէթների ձեռքով։

—

(Հրագիրներից)

✦ «Б. В.»-ին հեռագրում են Զուլֆայից, որ զինուորական մասնագէտները Դիլմանի մօտ տեղի ունեցած գործողութիւնները համարում են բացառիկ թէ ռազմագիտական, թէ տակտիկայի և թէ ձեռք բերված հեռանքի տեսակէտներից։

✦ Հազար հոգուց բաղկացած յունական մի զօրախումբ պատրաստ է մեկնել Դալիպոլի թերակղզին։

✦ Սեվաստոպոլից հեռագրում են, որ ռուսաց նաւերը բռնել են թիւրքական մի նաւ, որը Բուլգարիայից Կ. Պոլիս էր տանում պատերազմական կօնտրաբանդ։

✦ Կ. Պոլսում սաստիկ յուզում է տիրում Բոլգարիայի արարքի առիթով, որը մտադիր է հանդէս գալ այս օրերս։

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—

(Վերջին հաղորդագրութիւն)
25 ապրիլի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Ապրիլի 23-ին Օլթիի ուղղութեամբ մեր զօրքերը շարունակում էին նեղել թիւրքերին Սիվրի-չայ գետի և Թորթում-գեօլ լճի շրջանում, ուր մերոնք դերի վերցրին 8 թիւրք օֆիցէր և մի վաշտ ասկէրներ։

Ալաշկերտի հովտում, Կարաքիլիսէից դէպի հարաւ-արևելք, տեղի ունի ոչխարոշ ընդհարում։

Ատրպատականում, Դիլմանի շրջանում, տեղի ունի մեր առաջապահ հեծեալ մասերի ընդհարում թիւրքերի հետ։

ԹԻՒՐՔԱՑ ԲԱՆԱԿԻ ՏԻՈՒՐ ՎԻՃԱԿԸ

—

«Corriere della Sera»-ի Թղթակիցը նը-կարագրում է թիւրքաց զօրքի ողբերգական դրութիւնը։

«Այդ զօրքերը սաստիկ վատ վիճակի և վատ տրամադրութեան մէջ են։ Արևելեան և արևմտեան զօրաճակատների պարտութիւնը խիստ կերպով է ազդել նրանց վրա։

«Արևմտեան Հայաստանը ծխի մէջ է։ Քաղաքները վերածված են հիւանդանոցների և գերեզմանատների։

«Տրապիզօնը կիսով չափ քանդված է. բնակիչները փախչում են հազարներով։

«Թիւրքերի կորուստը անկարելի է հաշուել։ Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, ընկել է 60,000 մարդ։ Սանմանամերձ թիւրք ազգաբնակութիւնը չէ հաւատում այդ լուրերին։ Նա ենթադրում է և հաւատացած է, որ աւելի մեծ թիւ է ընկած, և այդ պատճառով նրա մէջ աճում է մի արտաքին դէպի կառավարութիւնը, որ սա այդպիսի մի անմիտ քայլ արեց ձմեռվայ կիսին և զօրքերը ջարդել տուեց։

«Արևելեան Հայաստանին, բացի կոտորածից, սով է սպառնում։ Այդտեղ հետզհետէ պակասում են անհրաժեշտ մթերքները՝ շաքարը, նաւթը և այլն։ Իսկ հացը սպառվելու վրա է։

«Բոլոր քաղաքներում ճարակում են տիֆը, սովը, խոլերան։ Տիֆից մանաւանդ շատ մարդ է մեռնում»։

ՄԻԼԻՒԿՈՎԸ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՄԱՍԻՆ

—

Մօտ օրերս Պ. Ն. Միլիւկով Մոսկվայում խօսեց մի դասախօսութիւն «Թիւրքիան, Կ. Պոլիսը և նեղուցները» թեմայով, օրի մասին տպված է «Рус. Вѣд.»-ում։

Պ. Ն. Միլիւկովը Թիւրքերի Եւրոպայում մնալը համարում է օրպէս պատմական մի պատահականութիւն, որպէս հակաբնական մի երևոյթ։ Այդպէս է եղել նա հէնց սկզբից, 500 տարի առաջ. այդպիսին շարունակել է մնալ այնուհետև երկար ժամանակ։ Ի զուր չէ, որ թիւրքերի Եւրոպա գալու հետ միաժամանակ՝ ծնվեցին և Թիւրքիան բաժանելու ծրագիրները, որոնք այնուհետև չընդհատվեցին։ Բումինացի մի բանաբեր «Թիւրքիան բաժանելու ծրագիրներ հաշուում է 100 հատ»։

Միլիւկովը սուլթան Աբդուլ-Համիդին համարում է Թիւրքիայի սիմվոլը, թէ ինչպէս Աբդուլ-Համիդի մէջ էր հեռզհետէ մեռնում կեանքը, այնպէս էլ մեռնում էր նրա Թիւրքիայի կեանքը։ Միայն մահը մի քիչ երկարում էր։ Եւ վերջապէս հասաւ այդ ըսկէն էլ։ Պատմութիւնն այդ վաղուց էր պատրաստում։ Այժմ արդէն չը պէտք է ետ դառնալ և թողնել վճիռը։

Բայց հէնց այժմ Ռուսաստանին անհրաժեշտ է, օրպէսզի չը կրկնի Գերմանիայի դէրը, իր դէմ չը յարուցի պետութիւնների նոր խմբի հակառակութիւնը։ Ռուսաստանը պէտք է Կ. Պոլիս գնայ իր ազգային շահերը իրականացնելու, բայց ոչ ազգային ցնորքներով։ Այդ ցնորքներից մէկը հետևեալն է. Պոլիսը դարձնել համասլաւոնականութեան ֆեդերացիայի կենտրոն՝ Ռուսաստանի գլխաւորութեամբ։ Ամբողջ պատմութիւնը դէպի այդ ֆեդերացիան չի ձգտում։ Դրա մասին երազը վտանգներ է սպառնում ոչ միայն մեր Եւրոպայի հետ ունենալիք յարաբերութիւններին, այլև մեր՝ դէպի սլաւոնականութիւնը ունեցած յարաբերութիւններին։ Այդօրինակ ֆեդերացիայի օրգանիզմը չի կարող առողջ լինել։ Երկրորդ ցնորքն է՝ Կ. Պոլիսը լինի ուղղափառութեան կենտրոն, լինի ինչպէս «երրորդ Հռոմ»։

Դասախօսը մանրամասն քննութեան է ենթարկել այն բոլոր դժուարութիւնները, որոնք կապված են այդ երազի իրականացման հետ։

Զը պէտք է նաև մտածել, որ Կ. Պոլիսը այժմ էլ մնում է համաշխարհային առևտրի կենտրոն։ Եթէ երբեմն Նապոլէօնը իրաւունք ունէր ասելով, թէ «եվ տիրի Կ. Պոլսին, կը կառավարի աշխարհը», այժմ արդէն այդ ասֆորիզմը կորցրել է իր ճշմարտութիւնը։ Կ. Պոլսի առևտրի համաշխարհային նշանակութիւնը և նրա համար համաշխարհային մրցութիւնը հեռացել են նրանից։ Ոչ թէ իր համաշխարհային պատմական և համաշխարհային առևտրական նշանակութեամբ է հարկաւոր մեզ Կ. Պոլիսը, այլ նա մեզ հարկաւոր է որպէս բանալի մեր տան համար, ինչպէս արտայայտվել է Ալէքսանդր I. Նեղուցներին տիրելով, մեր սև-ծովեան ափերը դառնում են ապահովված վայրեր։ Ահա նեղուցներին տիրելու հիմնական խնդիրը։ Իսկ Կ. Պոլիսը ինքը միայն դրանց հետ անցնում է մեր ձեռքը։ Եւ այդ անցումը անխուսափելի է։

Պ. Ն. Միլիւկով այնուհետև ուշադրութիւն է դարձնում նեղուցները չէզոքացնելու ծրագիրների վրա և օրոշում այն չափը, որով թոյլատրելի է այդ չէզոքացումը։ Նա պէտք է միայն այնպէս լինի, որ չը վիրաւորի ոչ ռուսների սուվերենիտէտը՝ նեղուցների վրա, ոչ էլ Ռուսաստանի իրաւունքը այդտեղ ամրութիւններ շինելու։ Միայն այն ժամանակ մենք կը ստանանք իսկական «բանալին»։

Շատ անգամ ուրիշների համար աշխատելով, որ ելք ունենան դէպի բաց ծովը, որ ազատ լինեն, Ռուսաստանը ամեն տեսակ հիմք ունի իրագործելու և իր նպատակը, այն է՝ ազատական նպատակը։ Եւ այդ այնքան ճիշդ է, որ մենք, վերացնելով մեր պատմական հարցը այդտեղ, մենք դրա հետ միասին արմատ ենք նետում Եւրոպայի մարմնի վրա եղած վէրքը՝ արևելեան խնդիրը։ Սա—մեր վերջին պահանջն է Եւրոպայից, և այդ՝ եւրոպական խաղաղութեան հաստատուն լինելու շահերի տեսակէտից։

ԹՈՒՐՔԻԿ ՄՏՔԵՐ
XV

Ինչպէս յայտնի է պատմութիւնից, Մերձերկրական ծովի արևելեան մասը՝—այն անկիւնը, որ կազմում են հիւսիսից, հարաւից ու արևելքից պատող երկիրները եւ ելք գլխաւոր մայր ցամաքների՝ Եւրոպայի, Ասիայի և Աֆրիկայի—ներկայումս՝ XX դարի շեմքում բոլորում է իր հազարդարեան անցեալի մի նոր պատմական շրջանը, որ բանալու է համամարդկային պատմութեան մէջ մի նոր դարաշրջան։ Եւրոպական առաջնակարգ հզոր պետութիւնները իրանց զօրքերով ու նաւատորմիղով արշաւում են Դարդանէլի ու Բոսֆորի վրա, այսինքն այն նեղուցների վրա, որոնք ամենահնագոյն ժամանակներից կաւախնձոր են եղել ասիական ու եւրոպական պետութիւնների միջև։ Այդ նեղուցներն են մի կամուրջ, որով անցել են հին ժամանակներից շատ ազգութիւններ Առաջաւոր Ասիայից դէպի Եւրոպա և հակառակը։ Այդ նեղուցների շուրջը բոլորած երկիրներն ու ազգութիւններն ենթարկվել են հնադարեան անցեալում տեղական, լեզուական և ազգային ամեն տեսակ փոփոխութիւնների, որոնց հետևանքն է այն բազմերանգութիւնը, որով աչքի է ընկնում այժմ վերոյիշեալ երկիրների տէր Թիւրքիան։

Դեռ Քրիստոսի ծնունդից շատ և շատ առաջ, մի քանի հազար տարիներ առաջ հին Ելլադայից սկսվեց Արգոնաւտների արշաւանքը դէպի Սև-ծովն և Առաջավայր Ասիայի ծովեզերեայ երկիրները։ Քրիստոսի ծնունդից մօտ 2000 տարի առաջ տեղի ունեցաւ Տրոյադայի նշանաւոր պատերազմը հէնց այն վայրերում, ուր ներկայումս դաշնակից պետութիւնները ասիական ծովափի վրա առաջ են խաղում թիւրքաց զօրքի դէմ։ Ելլադայի բոլոր թագաւորութիւնները դաշն կնքեցին և միացեալ զօրքերով արշաւեցին ծովով Փոքր Ասիայի հիւսիս-արևմտեան անկիւնում գտնվող Տրոյադայի թագաւորութեան վրա։ Փոքր Ասիայի թագաւորութիւններն ևս միացան յոյների դէմ՝ պատերազմելու համար Տրոյադայի հետ։ Դրանց թիւումն էր նաև հայոց արքայ Զարմայրը։

Ինչպէս յայտնի է, յոյները յաղթեցին և Տրոյադան քայքայվեց։ Յետապայում Ալէքսանդր Մակեդոնացին Յունաստանին տիրելուց յետոյ անցաւ Փոքր Ասիա, և առաջին ճակատամարտը Փոքր Ասիային իշխող հզոր Պարսկաստանի զօրքերի հետ տեղի ունեցաւ Փոքր Ասիայի հիւսիս-արևմտեան անկիւնում։ Գրանիկ գետի հովտում, այսինքն ներկայ պատերազմական վայրերի շրջանում։

Առաջաւոր Ասիայից ևս տեղի է ունեցել շարժում դէպի արևմուտք նեղուցների վրայով։ Օրինակ պարսկական թագաւորութեան ամենածաղկեալ շրջանում, երբ ամբողջ Փոքր Ասիան և Եգիպտոսը պարսկական իշխանութեան տակ էին, պարսից Քսէրքսէս արքան կամեցաւ իշխել նաև Յունաստանի վրա։

Քսէրքսէսը մեծաքանակ զօրքերով անցաւ Փոքր Ասիայից Եւրոպական ափը, սակայն այդ արշաւանքը վերջ ի վերջոյ ունեցաւ անհաջող վախճան։ Յոյները յաղթեցին։ Յետագայում հռոմէական, ապա բիւզանդական կայսրութիւնը տիրում էր նեղուցների երկու կողմը գտնվող ասիական և եւրոպական ափերին և մի շարք արշաւանքներից յետոյ իր տիրապետութիւնը ընդարձակել էր մինչև պարսից պետութեան սահմանները։

Վերջում մահմեդական պետութիւնը նուաճեց նեղուցները ու Պոլիսը, այն է 1453 թուականից մահմեդական օսմանեան պետութիւնն է իշխում քաղաքակրթութեան օրրան Առաջաւոր Ասիայի և նեղուցների շուրջը գտնված երկիրների վրա։ Եւ ահա այդ հրաշալի երկիրը, օժտված բնութեան ամեն տեսակ բարիքներով, 462 տարի գտնվում է կրօնական ֆանատիկոսութեան և ցեղային բարբարոսութեան լծի տակ։ Երկիրը 462 տարի շարունակ հեծում է. իսկ քաղաքակրթ ազգերն այժմ վերջ են ուզում տալ և փրկել մարդկութեան քաղաքակրթութեան օրրանը, աշխարհիս ամենագեղեցիկ երկիրներից մէկը՝ մարդկութեան կեղտից և ապականութիւնից, որ ներկայացնում է իրանից մահմեդական Թիւրքիան։

Ա. Նազարէթեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԲԵՍԿՐԻՊՏ

—

(Պետ. Հեռ. Գործ.)
24 ապրիլի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Բարձրագոյն բեսկրիպտ յանուն Գերագոյն Զօրահրամանատար դեռ-ներալ-ադիւտանտ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայևիչի.

Զերդ Կայսերական Բարձրութիւն.

Անշեղ հետևելով Իմ ցուցմունքներին, որոնք հետամուտ են իրականացնելու մեր քաջարի նախնիքների փայլուն պատգամները—ազատելու սլաւոնականութիւնը թշնամու բռնակալ լծից, Դուք, շնորհիւ Ձեր տոկուն կամքի ու անյողդողդ վճռականութեան, ծանր կռիւի ամենալուրջ հանգամանքներում Ձեր խելացի ղեկավարութեանը յանձնված արի զօրքերով նուաճեցիք Ռուսաստանին հայրենակից Ձէրնովայա Բուսը և ներկայումս աջողութեամբ շարունակում էք ասիճանաբար պոկել բռնակալ ձեռքից լծակիր Բուսը։

Ձեր հմտալի ղեկավարութեան ներքոյ ռուսական քաջարի զօրքի այդ մեծ սխրագործութիւնը ընդմիշտ դրոշմված կը մնայ մեր հզոր հայրենիքի պատմութեան փայլուն էջերում։

Այժմ, անձամբ այցելելով աւստրո-գերմանական տիրապետութիւնից ազատագրված Գալիչինը և համոզվելով մեր նուաճած երկրում հաստատված հոգատարութեան և գեղեցիկ կարգուկանոնի նկատմամբ, Ես, խորապէս գնահատելով Ձեր գործունէութիւնը, նաև Ձեր առ Գահն ու Ռուսաստանը ցոյց տուած խոշոր ծառայութիւնները, կամենալով ցոյց տալ Ձեզ Իմ սրտագին երախտագիտութեան նոր ապացոյց, շնորհում եմ ընդ սմին Գէորգիէվսկի գոհարապարդ թուր «Ձէրնովայա Բուսը ազատագրելուն համար» մակագրութեամբ։

Թող օրհնէ Ձեզ և Ձեզ վստահացված զօրքին Ամենաբարձրեալի հզոր Աջը՝ առ ի նորանոր քաջագործութիւն ի փառս ռուսաց զէնքի և ի յաղթութիւն Ռուսաստանի՝ ընդդէմ յանդուգն յամառ թշնամիների։

Հանապազ Ձեզ բարեհաճ։

Իսկականի վրա նորին Կայսերական Մեծութեան ձեռքով ստորագրված է՝

Սրտանց Ձեզ սիրող և երախտապարտ ՆԻԿՈԼԱՅ

Կայսրան Բրոդի, 12 ապ. 1915 թ.

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—

(Պետ. Հեռ. Գործ.)
24 ապրիլի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Միտավայի շրջանում մեր զօրքերը շարունակում են ետ նեղել հակառակորդին։

Մլավայի ուղղութեամբ մենք շարունակեցինք մեր աջող գործողութիւնները։ Ապրիլի 23-ին մենք գրաւեցինք Մարցիշէ և Գրժիմկի գիւղերը և վանեցինք այդ շրջանում հակառակորդի երեք հակայարձակումը։

Գերմանացիք անպտղի փորձեր արին խլելու մեր գրաւած Պօմեռանը։ Ապրիլի 23-ին հակառակորդը չանաց անցնել Նարեւ գետը։

Ասպատում և անքամ է... Մթթէ դուք,
Ո՛վ դիւցազներ, դուք դեռ պիտի ըսպասէք,
Որ մի օտար սամարացի ձեր խրոնուկ
Հաւատակցին տայ օթեան, հաց ու ջուր,
Իսկ դուք մօտից պիտի անցնէք կուշտ ու
կուր...

Օ՜, ոչ, քաջեր, երկրի վերա ձեզ համար
Դեռ վսե՞մ են ճշմարտութիւն, սէր ու գութ.
Ես տեսնում եմ ճակատներին ձեր պայծառ
Ոգեորիչ և՛ զարհուրանք, և՛ դայրութ...
Ե՛լ, ծառացի՛ր, ով Փրկչական վեհ բանակ,
Զար ոգու դէմ աշխարհաւեր, նենգաւոր.
Թող սասանի՜, փոշիանայ օտքի տակ
Անօրէնի արիւն-գործը դարաւոր...
Ե՛լ և կոչի՛ր նորան տեղ կռուի դաշտ,
Անմեղների փրկրի՛ր շրջիան ու կապանք.
Ծով-ցաւերում Փրկչէի հոտին խաչապատ
Դու ներշնչի՛ր ազատութեան մի նոր կեանք...
Որպէս զընդեր հրեշտակների թեւապար՝
Վրիժառութեան ոգով բորբոք ու լեցուն,
Թրոէք, քաջեր, ազատեցէք վանք, տաճար,
Եւ դարձուցէք Աստծոյ Տունը՝ Աստրծունն։
Այնտեղ ազգեր անհոն սիրով, գոհունակ
Ձեզ քաղցրալուր կերգեն օրհնանք ու սաղմոս.
Հրեշտակների ձեռքից կառնէ սուրը պլսակ
Կռուի դաշտում ընկած ամեն մի հերոս...»։

—

Լա՜ց ծերուկն... Ասես որոտ լեռներում,
Արձագանքեց ծերի խօսքին մի ահեղ,
Հանուր մի կոչ հերոսների շարքերում—
«Երթանք, թողնենք կին, երեխայ, տուն ու
տեղ»։

Եւ դիւցազներ վառված մի սուրբ տենչանքով՝
Խոր զգացվե՛լ, լալի՛ս էին, կանանց պէս.
Քաջը քաջի ձեռքն էր սեղմում հրաբուռանքով,
Թշնամիներն իրար գըրկում ժրպտերեսս։
Պճնված

Վիլիցա գետը Կոշլովցայի մօտ, բայց պարզիւն։

Գալիցիայում, Վիսլայի և Կարպատների միջև, կռիւները շարունակվում են սխիկն յամառութեամբ, ընդունելով մեծ ճակատամարտի բնոյթ։ Այստեղ գերմանական զօրքերը փոփոխում են իրանց դիրքերը։

Մէջ-Լաբօրչ ուղղութեամբ մենք ռուսական կռիւներով վանեցինք թշնամու 6 շեղատակի յարձակումները։

Մակուվկա շրջանում մեր ձեռքն անցնող գերիների թիւն աճում է։

Լոմիցայի հովտում մենք նոյնպէս կան աջողութիւնների ենք հասել։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՈ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 ապրիլի

ՊԱՐԻԶ.— Պաշտօնապէս հաղորդվում է. Քաղաքական ակներև շարժառիթներից դրդված՝ գերմանացիք վերջին երկու շաբաթը ստակացրին իրանց արշաւողական գործունէութիւնները արևմտեան ռազմադաշտում, բայց ամենուրեք կրեցին լիակատար անաջողութիւն և ունեցան ծանր կորուստներ։ Նոր հասարակ գերմանացիք այդ երկու շաբաթում աշխատում էին արշաւանքներ գործել լայն չափերով, սակայն այդ արշաւանքը բոլորովին պարտվեց բաղխվելով մեր դիմադրութեանը։ Գերմանացիք կորցրին 35,000 մարդ, ոչ մի տեղ չը ճեղքեցին մեր զօրագծերը և չը դրաւեցին ոչ մի կարևոր դիրք։

Ցերեկվայ պաշտօնական ազդ. «Արգոնները, Բագատելի մօտ, գերմանացիների գործած յարձակումը մրանգամայն անաջող անցաւ։ Մնացած զօրաճակատում, մանաւանդ Իպրի հիւսիսային մասում և Վոկուա շրջանում, տեղի են ունենում տաք թնդանոթային կռիւներ»։

ԿԷՊՏՕՆԻՆ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ գեներալ Բոտան գրաւել է Կարիբիբ կայարանը երկաթուղագիծը, նաև երկու կայան և յոյս ունի գրաւել մօտիկ ապագայում Վինդուկը։

ԾՈՎԻ ՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)

23—24 ապրիլի

ԼՕՆԴՕՆ.— «Զրեատան» շոգենաւը, որ Կոպենհագէնից դիմում էր Զինաստան, պայթել է կամ ականի կպչելով կամ ջրասուզվել է գերմանական ռազմանաւից։ Զոհեր չը կան։

ԼՕՆԴՕՆ. — Լիվէրպուլից Հարաւ-Աֆրիկա մեկնող «Ցէնտուիրօն» շոգենաւը երէկ ջրասուզվել է գերմանական սուզանաւից Իրլանդիայի ափերի մօտ։ Նաւատներն ազատվել են։

ԼԻՎԷՐՊՈՒԼ.— Իրլանդական ծովում գերմանական սուզանաւը ջրասուզել է «Կանադիա» շոգենաւը։ Նաւատներն ազատվել են։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐՔԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 ապրիլի

ՍՕՖԻԱ.— «Վօլիա Նարօդոյա» ապրիլի 24-ին տպած յօդուածում ասում է. «Իտալիայի դիրքը պէտք է բոլորը կառավարութեան համար ծառայէ քաղաքականապէս խիստ լոյալ չէզոքութեան օրինակ։ Մենք չենք կարող առաջինը լինել նրանցից, որոնք կամենում են միջամտել պատերազմին։ Ներկայ կառավարութիւնը չէ կարող բանակցութիւններ վարել, երբ երբեակ համաձայնութիւնը հրաժարվում է ապահովել գոնէ մի մասը այն պահանջների, որ ցայսօր առաջարկել է Բուլգարիան, և Իտալիան—միակ պետութիւնն է, որ կարող է իր քայլով խիստ փոխել ներկայ մեր քաղաքականութիւնը, որը պարտաւորապէս պէտք է համակերպվի Իտալիայի բռնած դիրքի հետ»։

ՊԱՐԻԶ.— Պալատի առևտրական մասնաժողովը քննեց Վիսլէատի առաջարկութիւնը՝ իրաւունք տալու քաղաքապետներին յարբունիս գրաւել հացահատիկը և նշանակել իրանց ցանկացած գները։ Մինիստրներ Վիվիանին և Տոմսոնը բոլորովին հանդստացուցիչ յայտարարութիւններ արին եղած պաշարի քանակի և երկիրը կենսական մթերքներով ապահովելու մասին։ Վիսլէատը իր առաջարկութիւնը յետ վերցրեց։ Սակայն կառավարութիւնը յայտնեց, որ սպէկուլիացիային ներհակելու նպատակով նոյնու ամենայնիւ մտադիր է օգտվել գրաւելու իրաւունքից։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Սանիտարական մասի Գերագոյն պետը մեկնեց Պետրօգրադից։

Բացվեցին բժշկա-սանիտարական օրէնդրութիւնը վերաքննող միջվարչական մանաժողովի նիստերը։ Նախագահ Ռէյնը յայտնեց, որ մինիստրների խորհրդի 1914 թ. նոյեմբերի 9-ի օրագրով, հաստատված թագաւոր Կայսրից, որոշված է բժշկա-սանիտարական բարենորոգման այժմեան իրականացման ժամանակ բժշկա-սանիտարական մասի Գերագոյն հսկողութիւնը առանձնացնել և հաստատել «պետական առողջապահութեան գլխաւոր վարչութիւն»։

ՄՕՍԿՎԱ.—Երկաթուղիների, զէմստվոների, Մոսկվա և Պետրօգրադ քաղաքների ներկայացուցիչների խորհրդակցութիւնը վճռեց հաստատել մատակարարական գնացք, որպէս զի կանոնաւորապէս անասուն ներմուծէ Պետրօգրադ։

Կայացաւ Անգլիայի հետ մերձենալու ընկերութեան հիմնադիր ժողովը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Բարձրագոյն բեսկրիպտով հարաւ-արևմտեան զօրաճակատի գլխաւոր հրամանատար գեներալ-ադիւտանտ Իվանովին յայտնված է Բարձրագոյն շնորհակալութիւն Զերնովայա Բուլը նուաճելու առիթով և շնորհված է գոհարներ Ալէքսանդրօ-Նեվսկիի շքանշանի համար։

ՊԱՐԻԶ.— Ռիբոն պալատին օրինագիծ ներկայացրեց, որ ազգային ինքնապաշտպանութեան համար անհրաժեշտ գումարը՝ պետական գանձատան արժէթղթերով, հասնում է 6 միլիարդ ֆրանկի։ Մինոյն նախագծով Ռիբոն խնդրում է թոյլատրութիւն՝ բաց թողնելու պետական գանձատան 1060 միլիոն ֆրանկի արժէթղթեր, որոնք զեղջվելու են Անգլիայում և կը վճարվեն Ֆրանսիայի տուած պատուէրների դիմաց, Ռիբոյի և Լլոյդ Ջորջի միջև կայացած վերջին համաձայնութեան այժմ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐՔԸ

— Պարիզից հեռագրում են, որ գիտութիւնների ճեմարանը, վերջացնելով խեղդող գազերի ուսումնասիրութիւնը, գտաւ նախազգուշական միջոցներ զինուորներին այդ գազերից պաշտպանելու համար և մշակեց այսպիսի եղանակներ, որոնց օգնութեամբ զորքը կը ստիպէ գերմանացիներին դադարեցնել պատերազմ վարելու այդ անարժան եղանակը։

— Պարիզում տեղեկութիւններ են ստացվել, որ Բրուսիան նոր առաջարկութիւն է արել Իտալիային։

— Կոպենհագէնից հեռագրում են, որ Բերլինի երկաթուղագծերը հաւաքել են 3000 վագոն՝ արևմտեան զօրաճակատից վիրաւորներին փոխադրելու համար, նկատի առնելով առաջիկայի վճռական ճակատամարտը։

— Լատիշական լրագիրները հանդստացնող տեղեկութիւններ են հաղորդում իրերի դրութեան մասին։ Հաղորդակցութիւնը Լիբավայի հետ կատարվում է անընդհատ։ Իրագայում ամբողջ շաբաթ հակայական ցոյցեր են լինում պլակատներով, որոնց վրա գրված է՝ «Կորչե՞ն գերմանացիք»։

— Պետրօգրադի դիպլոմատիական շրջաններում ստացված են լուրեր Պարիզից, որոնք հաստատում են, որ բուլգարական գեներալ Սավովը կարևոր միսիայով գալիս է Պետրօգրադ։

— Պլոնսկում, Վարշավայի մօտ, գերմանական օդաչուները ռումբեր նետեցին սինագոգի վրա։ Սպանված և վիրաւորված են 50 հոգի։ Իրարանցման ժամանակ ոտքի տակ ջարդվել են 20 հոգի։

— Վարշավայից հեռագրում են, որ Կէյդանի մօտ աւերված է հանգուցեալ Սոլիպինի կալուածքը։ Վերցված են շատ թղթեր ընտանեկան արխիվից։

— Սերբիայում կենտրոնացել են 50,000 բանիացիներ։

— Բերլինի լրագիրների խմբագիրները այս օրերս հրաւիրվել են արտաքին գործերի մինիստրութիւնը և ստացել են պաշտօնական հաղորդութիւններ, որոնց մէջ ասվում է, որ Իտալիայում հասունացել է վճռական անցքերի բոպէն և մոտեցել է վտանգը պայթելու օրը։ Կառավարութիւնը լարում է իր բոլոր ջանքերը խափանելու այդ վտանգը։ Մինիստրի վերջին խօսքերը ներշնչված են եղել ծայրայեղ յոռետեսութեամբ։ Ասվել է այն մասին, որ պէտք է պատրաստ լինել ամեն պատահականութեան։ Նոյն օրը երեկոյեան Բերլին է հասել Վիլհելմ կայսրը։ Շվեյցարիայից լուր է ստացվել որ Իտալիան Վրէնա է ուղարկել իր ուլտիմատումը։

ՎԻԼՀԵԼՄԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ ԲՐԻՍԵԼՈՒՄ

Կայզէրի տարեդարձի առիթով մի հսկայական կօնցէրտ տալու պատրաստութիւններ տեսնվեցին։ Կօնցէրտը տեղի էր ունենալու Բրբսելի La Monnaie պալատում։

Կօնցերտից օրի օր առաջ բոլոր տեղերը վարձված էին. կառավարիչ Von Bissing շատ ինքնագոհ էր երևում իր ձեռնարկի այդքան մեծ աջողութեան համար։

Բայց ներկայացման օրը ի՞նքը միայնակ էր մնացել կօնցերտի դահլիճում՝ ի զուր սպասելով հանդիսականներին։

Ոչ ոք ներկայ չեղաւ կօնցերտին։

Մի քանի վեհոգի բրբսելցիներ այս միջոցը խորհել էին, որպէսզի իրանց ատելի թշնամիներն զգան, թէ որ ատելանքի մեծ է նրանց շուրջը տիրող դատարկութիւնը և թէ որքան օժիտ՝ բելգիացիների հոգում դէպի գերմանացիները տիրող զզուանքը։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՏԱԼԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 ապրիլի

ՀՌՕՄ.— Գերմանական դեսպանատան տուած խորհրդով՝ գերմանացիք շարունակում են մեկնել Հռոմից։ Փակված են գերմանական գլխաւոր հաստատութիւնները և գրադարանները Հռոմում. այդ հաստատութիւնների ծառայողները մեկնել են։

Երէկ Հռոմից մեկնեցին նաև «Ֆոսիշէ Ցայտունգ» և «Բերլինէր-Տագէբլատ» լրագիրների թղթակիցները. այսօր երեկոյեան մեկնում են միւս թղթակիցները։

Աւստրօ-ունգարական դեսպանը այցելեց այսօր արտաքին գործերի մինիստր Սոնինոյին և զրուցեց նրա հետ մի քանի րոպէ։ Զրույցից յետոյ Սոնինոն ընդունեց Բիւլովի քարտուղարին։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Վիլհելմ կայսրի Բերլին այցելելը կապում են իտալական հարցի հետ։ «Լոկալ-Անցէյգէրը» պնդում է, որ Աւստրիան նոր առաջարկութիւն է արել Իտալիային, որին արդէն ստացվել է պատասխան։

ՀՌՕՄ.—Մամուլը լի է հայրենասիրական յօդուածներով Կվարտո-Ալմարէում տեղի ունեցած հանդէսների մասին։ «Կօրիերէ դէլլա-Սէրան» գրում է. «Բոլոր կուսակցութիւնները միացել են Գարիբալդիի արձանի շուրջ»։

ՉԻՆ-ԵԱՊՕՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 ապրիլի

ՊԷԿԻՆ. — Այսօր կէսօրվայ ժամը 3-ին յանձնվեց եապօնական վերջնագիրը։

Պատասխանի համար ժամանակամիջոց է տրված մինչև ապրիլի 26-ի երեկոյեան ժամը 6-ը։

ՏՕԿԻՕ.—Հաղորդում են, որ Իւանշիկայը հաստատ վճռել է մերժել Եապօնիայի վերջնագիրը։ Այդ դէպքում Եապօնիայի կողմից զօրքեր ուղարկելն անխուսափելի է։ Խակօդատէում և Խերօշիմում զօրքերը կազմ. պատրաստ հրամանի են սպասում։ Երկրորդ նաւատորմը կենտրոնացել է և սպասում է նոյնպէս կարգադրութեան։ Սուվօյից և Սագամիից նաւեր են ուղարկվել Ծիցագօ՝ եապօնական դեսպանին ընդունելու և եապօնացիներին պաշտպանելու համար։

ԽԱՐԲԻՆ.— Եապօնական բանկերը, ֆիրմաները և մասնաւոր անձինք չինական քաղաքներից հանել են բոլոր արժէքաւոր իրերը և կազմակերպում են դրուժիններ երկաթուղային շրջանում զօրքերին օգնելու համար։

Մասնաւոր ապրանքների ընդունելութիւնը հարաւ-մանջուրական երկաթուղագծում դադարել է։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՔԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 ապրիլի

ՍՊԱՀԱՆ.—Նէջէֆքաբադից եկան 4 գերմանացի զինուոր և մի օֆիցէր։ Այժմ այստեղ գտնվում են 8 գերմանական գործակալ։ Սպահանը ընտրված է ագիտացիայի կենտրոն, ուղղված դէպի Պարսկաստանի հարաւ և Աւղանիստան։

Թէհրանի և Համադանի միջև ապրանքներ փոխանակելը դադարել է։ Առևտուրը, բազարը և բանկերը անգործ են։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՍԱԿԻ ՓՈԽԱՐԷՆ

Ստացանք յօդուտ հայ փախստականների՝ նորոգ հանգուցեալ օր. Աստղիկ Ղազարեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն՝ 1) Դժխուհի և Առաքել Մելքոնեաններից 10 ր., 2) եղբ. Ց. և Վ. Զիլինկարեաններից 10 բուբլի։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՀՍԱՐԱՆ

Այսօր, ապրիլի 26-ին, Զաւալովի ժողովրդական Տանը, ցերեկվայ ժամը 11-ից տեղի կունենայ Թիֆլիսի ժողովրդ. համալսարանի ընկ. անդամների տարեկան ընդհ. ժողովը։

Ուրբաթ երեկոյ է, ինչ զոյութիւն ունի այդ ընկերութիւնը և այդ 8 տարվայ ընթացքում Թիֆլիսի նման կենտրոնական և զանազան ազգութիւններից կազմված բազմահազար ազգաբնակութիւն ունեցող քաղաքը այնքան անտարբեր է գտնվել դէպի այդ համակրելի ընկերութիւնը, որ դեռևս չէ կարողացել տալ նրան գոնէ հազար անդամ։ Եւ այդ այն ժամանակ, երբ ընկերութիւնը միջազգային է և անդամավճարն էլ տարեկան ընդամենը մէկ ռուբլի է...

Ժողովրդական համալսարանի ընկ. նպատակն է հանրամատչելի սիստեմատիկ և այլ դասախօսութիւնների ու գրագիտական դասընթացքների միջոցով մտաւոր մնունդ տալ ժողովրդի ստորին խաւերին և լուսաւորութիւն տարածել հասարակութեան անձեռնհաս և դեմօկրատ մասի մէջ։ Սակայն այս դէպքում ուրիշ այլ արգելութիւնների հետ միասին նրա առաջ միշտ ծառացել է հասարակութեան նիւթական և բարոյական լայն աջակցութեան խնդիրը, որ և խոշոր արգելք է հանդիսացել գործի առաջադիմութեան։

Ճշմարիտ է, մենք ապրում ենք հրոյ և կրակխառն պայմանների մէջ, բայց ժողովրդական համալսարանի նման համակրելի և ազգերի մէջ սիրոյ և համերաշխութեան գաղափարը կենդանի պահելու սկզբունքներով ղեկավարվող ընկերութիւնը նման արտակարգ պայմանների մէջ առաւել ևս ունի իր բոլոր պարտականութիւնները իր ընտրած ասպարէզում... Ուստի, պէտք է մի կողմ թողնել անտարբերութիւնը, և անդամագրվելով բազմացնել ընկերութեան անդամների թիւը ու այդպիսով զօրեղացնել նրան բարոյական և նիւթական աջակցութեամբ։

Այսօրվայ ժողովում լինելու է և վարչութեան կազմի լրացուցիչ անդամների ընտրութիւն։ Պէտք է մասնակցել, քննել ունեցած գործունէութիւնը և լրացնել վարչութեան կազմը գործելու արժանաւորութիւններով տոգորված մարդկանցով։

Բ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

— Երկրագործական դեպարտամենտի Թիֆլիսի վարչութեան մէջ այս օրերս տեղի ունեցան մի երկու խորհրդակցութիւն այն մասին, թէ թշնամի երկիրների հպատակները որքա՞ն իրաւունք ունեն օգտվելու մեր երկրում, մասնաւորապէս Թիֆլիսի նահանգում, ձեռք բերված հողերով։ Խորհրդակցութիւններից յետոյ որոշվեց հետևեալը. «Ցանձնարարել արքունի հողերի կառավարչին կազմել ցուցակագրութիւն այս թշնամի երկիրների հողատէրերի և հողագործողների (Գերմանիայի, Աւստրիայի և Թիւրքիայի հպատակների), որոնք գտնվում են Թիֆլիսի նահանգում։ Այս հողատէրերը բաժանվում են երկու կարգի. նրանք, որոնք հողը ձեռք են բերել մինչև 1880 թիւը, և նրանք, որոնք ձեռք են բերել 1880-ից յետոյ։ Վերջինների վրա գործադրվելու է 1915 թ. փետր. 2-ի օրէնքը»։

— Երէկ Մոսկվա մեկնեցին քաղ. վարչութեան անդամ Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկ և քաղ. բժշկա-սանիտարական վերատեսուչ Կ. Ստեփանեան, մասնակցելու մայրաքաղաքում կայանալիք առանձին խորհրդակցութեան աշխատանքներին, որ կազմված է համառուսական քաղաքների դաշնակցութեան կից։ Խորհրդակցութիւնը լինելու է սուր-վարակիչ հիւանդութիւնների մասին, թէ ինչ միջոցներ ձեռք առնել դրանց դէմ առնելու համար։

— Քաղ. վարչութիւնը տեղեկութիւն է ստացել, որ Պետրօգրադի հակաժանտախտային յանձնաժողովը որոշել է Թիֆլիսին վարկ բաց թողնել 148,000 ր.՝ սուր-վարակիչ հիւանդութիւնների դէմ կռուելու համար։

— Երկաթուղիների կառավարիչ Վ. Ա. Վասիլիևսկին կարգադրութեամբ ապրիլի 23-ից թոյլատրված է ապրանքներ ընդունել և ուղարկել, ուղղակի գծով, Թիֆլիսից Բաստով, Թիֆլիսից Բաթում-Փոթի։ Ապրանքներ կարող են ուղարկվել ամեն տեսակ։

— Թիֆլիսից Բաթում երթևեկող գնացքների թիւը աւելացված է և երթևեկութիւնը կանոնաւորված։

— Երկուշաբթի, ամսոյս 27-ին, քաղ. դումայի հերթական նիստը չի կայանայ։

— Դարձնում ենք քաղաքային վարչութեան ուշադրութիւնը հետևեալ հանգամանքի վրա։ Հալաբար տանող Մէյդանի երկու կամուրջների շուրջ գտնվող խանութպանները, տանտէրերը և այլ կենսոները սովորութիւն են դարձրել՝ տարիների ընթացքում հաւաքված աղբը և այլ ապականութիւնը պարկերով, քթոցներով և կամ այլ կերպ բերել և կամուրջների վրայից ամբողջ օրերի ընթացքում դատարկել դէպի գետը։ Շրջակայքը տարածվում են ամեն տեսակ փող, գարշահոտութիւն և ապականութիւն, իսկ եթէ քամի է լինում, տարածվում են ամեն կողմ։ Զենք խօսում անցնողների մասին, թէ ինչպէս քամին նրանց երեսին է տալիս ամեն ինչ, որ թափվում են գետը։ Ժամանակ է այժմ արգելել այդ վերին աստիճանի ագեղ, վնասակար ու հակառողջական սովորութիւնը։

— Ամսոյս 28-ին, երեքշաբթի օր, Վահրամ Փափազեանը երկրորդ անգամ դերասան Բարատովի ռուսական դրամատիկական խմբի հետ Արտիստական թատրոնում կը կատարէ Արծուիկի դերը հայերէն՝ «Արծուիկ» պիէսում։

— Սարդարապատից և Զուլֆայից սանիտարական երկու գնացքով Թիֆլիս բերվեցին հիւանդ և վիրաւոր զինուորներ, որոնց մէջ կան 3 վիրաւոր և մի հիւանդ օֆիցէր։

— Հայ օրիորդների կոմիտէն մտադիր է առաջիկայ մայիսի 18-ին հրատարակել հայերէն և ռուսերէն լեզուով մի լրագիր՝ իր միջոցները աւելացնելու համար։ Նոյն կոմիտէը ապրիլի 30-ին, Համբարձման տօնի օրը, Թիֆլիսի ժողովարանում կազմելու է ժողովրդական զբօսանք, ուր կատարվելու և երգվելու են հայկական և «Ջանգիլիում» ժողովրդական երգերը։

— Թիֆլիսի շրջակայքում ձիւն գալու հետևանքով՝ քանի օր է քաղաքում բաւական զգալի ցրտեր են լինում։

— Մի խումբ վրացի կանայք մտադիր են հրատարակել վրացերէն լեզուով մի թերթ՝ «Կնոջ Իրաւունքը» անունով։ Թերթը սկզբում լոյս է տեսնելու շաբաթը երեք անգամ։

— Ստացանք Կովկ. Հայոց Բարեգործ. Ընկ. 1914 թ. տեղեկագիրը, որից երևում է, որ այդ թուի ընթացքում Ընկ. մուտք ունեցել է 63,138 ր. 16 կ., որանից ծախսվել է 8674 ր. 53 կ.։ Առ. 1-ն յունվարի 1915 թ. մնացել է 45,010 ր. 60 կ.։ Այդ տարում Ընկ. դեֆիցիտ ունեցել է 2338 ր. 78 կոպէկ։ 1915 թ. նախահաշիվ համաձայն, Ընկերութիւնը մուտք ունենալու է 9465 ր., ծախք նոյնքան, դեֆիցիտ 1945 բուբլի։

ԿՈՎԿԱՍ

— Վլադիկավկազի Փոխադարձ Վարկի Ընկ. որոշել է իր դիվիդենտից 2359 ր. 43 կոպէկ յատկացնել Կովկասի զօրաճակատում վնասված ազգաբնակութեան։ Այդ գումարը բաժանված է ընկերութիւնների մէջ հետևեալ կերպ. Վրաստանի էկզարխի նախագահութեան տակ գործող պատերազմից վնասվածներին օգնող կոմիտէին 589 ր. 86 կ., Թիֆլիսի վրաց Բարեգ. Ընկ.՝ 589 ր. 86 կ., Թիֆլիսի Հայոց Բարեգ. Ընկ.՝ նոյնքան, Բագուի Թուրքաց Բարեգ. Ընկ.՝ նոյնքան։ Ցիշված գումարները փոխադրված են ապրիլի 14-ին ըստ պատկանելոյն։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

— Պետրօգրադում կայացաւ բանկերի խորհրդակցութիւն նոր 5½%-ային փոխառութիւն բաց թողնելու մասին։ Պարզվեց, որ 400 միլիոնի բէալիզացիան յաջող են առնում Պետրօգրադի բանկերը, 200 միլիոնը՝ Մոսկվայի, մնացած 400 միլիոնը՝ պետական բանկը և խնայողական գանձարանները։ Ստորագրութիւնը կը սկսվի մայիսի 12—15-ի միջև 4 նուազ վճարումներով։

— «Вечерн. Время»-ի խմբագիրը Սուվորինը ապրիլի 22-ին տպած «Պօստային վարչութեան ժողովարարութիւնը» յօդուածի համար քաղաքապետից տուգանվել է 3000 բուբլով։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆՈՒՄ

Ուրբաթ, ամսոյս 24-ին, կայացաւ Գրական-Գեղագիտական Սալօնի այս տարվայ սեզօնի վերջին երեկոյթը։

Նախագահ բժշկապետ Բ. Նաւասարդեան ժողովը բանալով՝ հակիրճ խօսքերով յայտնեց, որ այս տարի լրանում է Սալօնի գոյութեան 10-ամեակը, և խնդրեց օտքի կանգնելով շնորհակալութիւն յայտնել Սալօնի տէր և անօրէն պ. Տիգ. Նազարեանին։ Ժողովրդականները օտքի կանգնելով օվացիա արին պ. Նազարեանին։

Սրանից յետոյ ժողովրդականները խօսեցին ներկայումս կատարվող հայկական կոտորածների մասին։ Վանի մասին մի քանի տեղեկութիւն տուաց պ. Շերէնց, խօսեցին նաև պ. պ. Աւ. Եզեկեան, Ց. Սպէնդիարեան, Գր. Վարդանեան, Ա. Թոփչեան և ուրիշներ։

Այս զրոյցից յետոյ նախագահի առաջարկութեամբ ժողովը հաւանութիւն տուեց Սալօնի ապագայ գործունէութեան համար ծրագիր մշակելու մի մարմին ընտրելուն։ Այդ մարմինը կազմված է լինելու հետևեալ անձերից՝ բժշկ. Բ. Նաւասարդեան, տ. Ն. Դոլուխանեան, տ. Ց. Սպէնդիարեան, տ. Շ. Խանազատեան, պ. պ. Ց. Սպէնդիարեան, Հ. Առաքելեան, Յովհ. Ակուլեան, բժ. Վ. Արծրունի, Ա. Աթանասեան, Աւ. Եզեկեան, Մն. Խաչատուրեանց, Ա. Նազարէթեան, Գր. Վարդանեան, Ց. Սոլոլեան և Բենիկ վարդապետ։

Վերջում եղան արտասանութիւններ։ Վ. Փափազեան արտասանեց Վ. Տէրեանից երկու ոտանաւոր և Ռոստանի «Արծուիկից» մի հատուած։

Երեկոյթը վերջացաւ «Մեր հայրենիքով»։

Ս. Ռ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 25 ապրիլի

Խնդրեմ այս երկտողով «Մշակի» միջոցով յայտնել ի գիտութիւն իմ մի քանի ընկերների, որ ես՝ կատարելով նրանց բարի ցանկութիւնը՝ յանձնեցի խմբագրութեանդ մէկ 100 ռուբ. յօգուտ Նպաստամատոյց Ընկերութեան, որպիսի գումարը ընդ սմին ներկայացնում եմ։

Արշակ Ասլիանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԻՒՐԴԱԿԱՆ «ՎՏԱՆԳԸ» ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

VII

Սահմանադրական-յեղափոխական օրերն էին. Ամբողջ Պարսկաստանը յուզված, ալեկոծված՝ նորանոր փոթորիկներ էր ստեղծում մէկը միւսից աւելի կատաղի, մէկը միւսից աւելի կոտաքրքիր։ Կենտրոնական կառավարութիւնը իր նորահաստատ պարլամենտով աշխատում էր մաքերը խաղա-

ղեցնել և օրքան հնարաւոր էր՝ անմիտ վոհերը տալու առաջն առնել. սակայն ի զուր. յեղափոխութիւնը քանի գնում բռնկվում էր և համատարած լինում։ Տարօրինակ էր. զօրձի գլուխ կանգնել էին ֆէօդալ դասակարգը և հենց դրանով էլ ապացուցանում, որ «սահմանադրութիւն» բառը թիւր ըմբռնողութիւն էր պարսկատանցու համար. բայց և այնպէս, խնդիրը առաջ էր գնում ամբողջ թափով և հեղհեղէ աւելանում էր անջումանների թիւը ու խանում յեղափոխական շարքերի օգակները...

Քիւրդստանը, որպէս մի ֆէօդալ երկիր, աւելի հիմք ունէր յարելու դէպի ըսակցիան. բայց նա ենթարկվեց Ամրպատականի յաղթանակին և հաստատեց իր անջումանն ու կազմակերպեց ֆէդայական խմբեր... Եւ մինչ այդ՝ վրա հասաւ ռուսական զօրքը, ամեն մի նոր ծրագրված շարժում խեղդվեց տեղնուտեղը։

Ինչպէս ասացինք քիչ վերև, Քիւրդստանը, յանձին Մուքրիանի աղաների, արդէն յոգնած էր երևում այն բոլոր համարեա խրմնիքական ընաւորութիւն ստացած շարժումներից, որոնք յաճախ ստեղծվում էին Քիւրդստանում մանաւանդ յեղափոխական-սահմանադրական օրերում։ Նա կարիք էր զգում մի հղոր, ճնշող բազուկի, որ կարող լինէր երկրի խաղաղութիւնը պահպանել և արժանավայել պատիժը տալ չարամիտ խռովարարներին։ Այդպիսի մի ճնշող բազուկ նա չէր զտնում ոչ պարսից կառավարութիւնից, որը հեղհեղէ կորցնում էր իր դիրքը մանաւանդ Քիւրդստանում, և ոչ էլ օսմանեան կառավարութիւնից, որի փորձերի դառնութիւնները ճաշակել էին մի քանի անգամներ ու հիասթափվել։ Նա ապրում էր յուսոյ մի նոր, անծանօթ շողքերով, որոնք փայլում էին հիւսիսից և հեղհեղէ ճառագայթաւորում Ամրպատականի շուրջը։

Արդէն ասացինք, որ ռուսական զօրքի երևալով՝ Ամրպատականի խլրտումներն ու յեղափոխական շարժումները իսպառ դադարեցին ու կեանքը մտաւ իր նորմալ դրութեան մէջ։ Ընդհանուր առմամբ տրամադրութիւնը շատ նպաստաւոր էր դէպի ռուսական զօրաբանակը. անգամ Մէշհէդի սրբազան տաճարի ռմբակոծութիւնն ու Սիզաթ-իւլ-Իսլամ մուշտէիդի կախվելը առաջ չը բերին զայրոյթի այն արտայայտութիւնը, ինչ որ սպասելի էր, այլ ընդհակառակը, այդ ծայրայեղ քայլը եկաւ աւելի ամրապնդելու այն սարսափը, որով հիմնվին չքացան գաղտնի դաւեր սարքող շովինիստների մի քանի տասնեակ ներկայացուցիչները։ Քիւրդստանը միանգամայն սարսափեց այդ ֆակտից և հեռզհեռէ զգաց ռուսական սուինների մօտիկութիւնը ու սկսեց ինքն իր մէջ ամփոփվել և օրքան կարելի է մօտ յարաբերութիւն ստեղծել ռուսական միսսիայի հետ։

Ռուսական զօրքը դանդաղ քայլերով առաջանում էր դէպի Քիւրդստան. արդէն նրանք գտնվում էին Մարաղայում և ըստ երևոյթին չէին շտապում աւելի առաջ գնալու։ Հենց այդ օրերում տեղի ունեցաւ մի դէպք, որը Քիւրդստանի համար ունեցաւ իր հակատագրական նշանակութիւնը։ Ռուսաց Թաւրիզի հիւպատոսարանը յանձնարարել էր Մարաղայի իր ագենտ պ. Զ. Մելիք-Ազարիանին գնալ Սօուջ-Բուլաղ՝ կարեւոր միսսիայով. ագէնտը ճանապարհվում է. սակայն քաղաքին չը հասած՝ Այրիղաջ գիւղում արդելք է հանդիպում Դէմօքրի հաջի Էլ-Խանիի կողմից, որ վիրաւորական ձևով ետ է դարձնում ագէնտին դէպի Մարաղա. այդ հանգամանքը խաղաղ ազգաբնակութեան վրա թողնում է ճնշող տպաւորութիւն, և բոլորը, սկսած առաջնակարգ կալուածատէրերից մինչև յետին ռամիկը, բոլոր առ բոլոր սպասում էին ռուսաց զօրքի մուտքը Սօուջ-Բուլաղ՝ այդ անարգանքի վրէժը լուծելու թէ մասնաւորապէս Էլ-Խանիից և թէ քաղաքի մի քանի խռովարար առաջնորդներից, որոնցից ի նկատի էր առնված գլխաւորապէս յայտնի Ղալի Ֆաթթահը։ Սակայն, ռուսաց առաջացումը դանդաղում էր, թողնելով քիւրդերին ճնշող երկիւղի տակ...

VIII

Այդ դէպքից միայն տասն ամիս յետոյ յայտարարվեց, որ պաշտօնապէս հիւպատոսարան է հաստատվելու Սօուջ-Բուլաղում, և արդէն ճանապարհված է օրսէս հիւպատոս հաւատարան զնդապետ Ալէքսանդր Իվանովիչ Եաը։ Պաշտօնական այդ լուրը ընդհանուր սոսկում առաջ բերաւ Քիւրդստանի բոլոր խաւերում։ Իւրաքանչիւրը սպասում էր տեսնել մի շարք խռովարարների գլխատում և կամ կախում. տպաւորութիւնը աւելի համակրական բնոյթ ունէր. խաղաղ ազգաբնակութիւնը հրճվում էր, որ վերջապէս պատժված տեսնելով չարագործ խռովարարներին՝ երկիրը կը ստանայ իր ցանկալի անդորրութիւնն ու ռուսաց հզօր և արդարադատ հավանաւ տակ ժողովուրդը կը զբաղվի իր առօրեայ հալալ աշխատանքով։ Քիւրդ աղաները խմբերով էին գալիս մեզ մօտ—որպէս ռուսահպատակ յայտնի Նազարբէկեանի ներկայացուցչի—և խորհուրդ հարցնում մեզանից, թէ ինչպէս ընդունեն հիւպատոսին և առ հասարակ ինչպէս վերաբերվեն, որ հակառակ չը լինի ռուսական օրէնքներին. մենք տալիս էինք պատասխանատու խորհուրդ, և նրանք մեկնում էին գոհ և ուրախ տրամադրութեան տակ։ Մինչև անգամ Էլ-Խանին և Ղալի Ֆաթթահը սկսեցին վերանորոգել մեզ հետ իրանց «բարեկամական» նամակագրութիւնները և կողմնակի կերպով հասկացնում էին մեզ, որ «բարի գնվենք» հաշտարար միջնորդ հանդիսանալու իրանց և հիւպատոսի միջև թիւրիմացութիւն ծագելու դէպքում։

Հասան հիւպատոսի ժամանման օրերը. Սօուջ-Բուլաղի շրջակայքը իրարանցման մէջ ընկաւ. իւրաքանչիւրը աշխատում էր աւելի փայլուն ընդունելութիւն ցոյց տալ, աչքի ընկնելու համար. մինչև անգամ եղան այնպիսի աղաներ, որ երեք օր առաջ մինչև բինաթ ընդառաջ էին գնացել, մի հանգամանք, որ չէ պատահել նոյնիսկ շահզադատաւորների դալու դէպքում։

Դիմաւորողների թիւը Միանդաբում հասնում էր մի քանի հազարի. և դա դեռ պարսիկ դիմաւորողների թիւն էր. երկրորդ օրվանից հիւպատոս Եաը անցաւ Թաթաւի գետը և ոտք դրեց Քիւրդստանի հողի վրա, երբ արդէն սկսեց քիւրդ դիմաւորողների հոսանքը։ Սարդար Մուքրին, Սօուջ-Բուլաղի դատաւորը, ցոյց տուեց խիստ արքայական ընդունելութիւն. միւս աղաները, խանները և հոգևոր դասակարգը նոյնպէս արտակարգ ընդունելութիւն ցոյց տուին, այնպէս որ հիւպատոս Եաը Սօուջ-Բուլաղ մտաւ մի տասնեակ հազար ձիաւորների հետ. մի ընդունելութիւն, որ ոչ մի դէպքում չէ տեսել և ոչ մի օսմանեան շահրանդար...

Խուրշիդ

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝
№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բաղու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 10 ժ. 23 ր. երեկ.
» Բօրժոմ 3 ժ. 20 ր. ցերեկ

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝
№ 3 Բաղուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից— 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բաղուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից— 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 6 ժ. 53 ր. առաւ.
Բօրժոմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Գուկիա, Զօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներսրսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վենեբական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱԶԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՈՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Պ. ԳԱՐԱԳԵՏԵԱՆ—12—1 ժ. երեշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԳԻՆ-Բ.ԺԻԶԻ ՅԵՐ-ԳԻՆԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵՆՈՆԵՐԸ

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՈՎԻՉ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Զաւակները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—70

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՅԱԽՎԵՐԴԵԱՆ

Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8, Սեմեսնովսկայա փող., № 18 (Զօրօնցօվի արձանի մօտ)։ Բժշկի ընակարանը Սեմեսնովսկայա, № 16.

(Չ. ու. կ.) 1018. 100—89

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1011. ՆԱԶԱՐՅԱՆՑ (Կենտրոնական արտաքին առեւտուր) ՄԻԽԱՅԼՈՎՍԿԻ ՊՐՈՍՊ. 127 (4.) 50—22

! Զգուշացէք կեղծիքներից !
ՊՐՕՖԻԶՈՐ
Գ. Ֆ. Յուրգենսъ-ի
Բօրեօ-Տիմօղեան
Սապօն
Քրտինքի, այրուածքի, պէզէնների, ուզդիների, պզուկների և գեղեն խալերի դէմ։
ՏՈՒԱԼԷՏԱՅԻՆ-ԱՆՈՒՇԱՀՈՏ ՍԱՊՕՆ
ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ։
Վաճառվում է ամենուրեք.
1 կտորը 50 կօպէկ, կէս կտորը 30 կօպէկ։
(Կ.) Գ. 26—1
Ոսկի մեդալ Լօնդրօն 1893 թ. Գ. Ֆ. Յուրգենսъ.

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում

կարելի է ձեռք բերել հետեւեալ գրքերը.
Հր. Փալեան. «Հաշտութիւն», պատմուածք հայ-թուրքական ընդհարում. գ. 30 կ.
Սալ-Ման. «Գեներալ Ե. Լազարեան». գ. 30 կ.
Մ. Տ. Շտտ. «Քիւրդերը Տաճկա-Հայաստանում» (Ազգագրական նիւթեր) հատոր Ա. գ. 60 կ.
Օրմանեան. «Ազգապատում» 21 հատ. իւրաքանչիւրը արժէ 50 կ.
РАФФИ, переводъ Кара-Мурзы «Хентъ», историческій романъ ц. 1 р.
АБАЗА. «Исторія Арменіи» ц. 1 р.
Դիմել՝ Въ Тифлисъ, Центральная книжная торговля. 258. 1—1

Ծախվում են

1) «ՎԵՆՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ» նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և ըէցէպտներով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նաթագրութեան կանոններ արիպէրով և այլ ցուցերով չը դատարկիւղ համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրոնիկական արիպէրի և բժշկութեան մասին, ըէցէպտներով։ Գինը 50 կօպ.։

2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՁԵՒՈՒ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ։ Թունաւորութիւններ և նրանց շտապօգնիչ, Բազմաթիւ տնային գեղեր և խորհուրդներ։ Շատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք զրպանի համար, և ամեն մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրա և թէ ուրիշներին։ Գինը 30 կօպ.։

3) «ԾԻԾԱՂԻ ՑՅՈՒՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ ասէկդոտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ տեսարանի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.։

Այս երեք գիրքը միասին պատնէշողներին

ԶՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻՐԱ ՆՈՒԷՐ

երեք հետեւեալ գրքերը. 1) «Ինկարմատի շալվարը» ծիծաղաշարժ վօդեվիլ շափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Բաֆֆի» պատկերով (գ. 10 կ.), 3) «Միհնոյն դագաղում», պատմուածք հայ-թուրքական կռիւներից, դիմների նկարներով, գինն է 7.։

Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կօպ. առաջուց ուղարկել անպայման պէրէվոդով։ (Մարկներ չը դնել նամակներում, հակառակ դէպքում պատասխանատու չեմ ոչ մի կերպ։ Հասցէն՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.
(Հ.կ.) 327. 100—97

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ.Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ

Բաղու, Կրասնովոդսկայա փ. տ. Ասան-Իզբաշեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս Դիզել շարժիչներ (մօտորներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։
Հօրիզոնական անգլիական շարժիչներ, (մօտորներ) «ԿՐՕՍՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ձիժին ½ ֆունտ կամ 200 գրամմ։
Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։
Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասոսներ)։
Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։
Մառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիկս» ընկ. գործարանից։
Ամեն տեսակ էլեքտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամո» ընկ. գործարանից։
Երկրագործական մեքենաներ՝ լոկոմոբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրաքտորներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։
Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։
Գերայիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում վանաձոր գործարաններ սարքել և գործի գցել իր մէջոցներով՝ ինժենիրներով և վարպետներով։
Դիմել՝ Баку Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur
(Հ.կ.) 551. 150—91

ПРИ ГОНОРРЕѢ
(ТРИППЕРѢ)
въ острой и хронической формѣ, а также ея послѣдствіяхъ
примѣняется средство
„АРМАТИНЪ“

для внутренняго употребленія. «Арматинъ» совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи «Арматина» не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п. Курсъ леченія около 6 кор.
Цѣна 1 кор. „Арматинъ“ 1 р. 75 к.
Продажа въ аптекахъ и аптекарскихъ магазинахъ.
ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ:
Исключительный успѣхъ, выпавшій на долю препарата «Арматинъ» А. Я. Акуліанца, вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ господъ покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать «Арматинъ» только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка.

ՄԻ ՆՈՐ ԶԵՌՆԱՐԿ ՀԻՊՆՕՏԻԶՄ ԵՒ
ՆՈՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ
ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ. ԱՌԱՆՑ ՈՒՍՈՒՑՉԻ։
Այս տեսաւ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅԻՇԷՐՉԵՆՆԻ
«Մարդկային մտքի քաջագործութիւնը կամ գործնական հոգեբանութիւն» ձեռնարկը։

Այս նոր Ձեռնարկով ամեն ոք, ով հայերէն լեզուին ծանօթ է, կարող է սովորել հիանալի։ Ներշնչել և սովորել նոր հոգեբանութիւն, և գործադրել նրան իր ամենօրեայ գործերում։ Այս նոր Ձեռնարկի արժէքի և ուրիշ բացատրութիւնների համար պիտի դիմել նամակով հետեւեալ հասցէով.
Ռուսաստանից—Сусаннѣ Шекерджянъ, Вельяминовская ул. № 22, Тифлисъ. Արտասահմանից—Sousanna Shekerjian, 22 Weliaminovskaya, Tiflis, Caucasus, Russia. 106. 25—8

Հոյակապ տեսաւ վաճառվում են
ՍԱԼ-ՄԱՆԻ
„ՀԱՅԱԶԳԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ“
Սերիայի հետեւեալ գրքերը. Գինն է
Գիրք I Գեներալ-ադիւտանտ Մ. ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔԵԱՆ. Երկրորդ տպագր։ Պատերազմի բեմի հերոսների նկարներով. . . 40 կ.
Գիրք II Գեներալ ադիւտանտ ՅՈՎՀ. ԼԱԶԱՐԵԱՆ. Պատերազմի բեմի հերոսների նկարներով. . . . . 30 կ.
Գիրք III Բայազէտի հերոս գեներալ-լէյտենանտ ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՂՈՒԿԱՍԵԱՆ. . . . . 35 կ.
Երեք գրքերը միասին՝ 1 բուբլի։
Ծախվում է թղթատարապէս հեղինակի մօտ. ուղարկվում է վերադիր վճարով։ Դիմել հետեւեալ հասցէով՝ Тифлисъ, Бебутовская ул. № 6. ВИРГИНІИ АТАНАСЬЯНЦЪ.

ВНИМАНІЮ ЛИЦЪ,
желающихъ имѣть побочный заработокъ.

Газета «Сибирскій Торгово-Промышленный Вѣстникъ», стремясь развить дѣло, повсемѣстно принимаетъ агентовъ-сотрудниковъ на опредѣленное мѣсячное вознагражденіе и проценты.

Жалованіе назначается отъ 20 до 50 рублей въ мѣсяцъ и обезпечивается нотаріальнымъ договоромъ, срокомъ на одинъ годъ.

Агентъ-сотрудникъ обязанъ сообщать редакціи еженедѣльно рыночныя цѣны своего района на продукты первой необходимости и о выдающихся событіяхъ. **Агентъ-сотрудникъ** долженъ содѣйствовать распространенію нашего изданія и знакомить жителей своего района съ таковымъ, для какой цѣли ему будетъ высылаться каждую недѣлю извѣстное количество нумеровъ газеты, которую онъ, въ свою очередь, долженъ раздавать своимъ знакомымъ и разсылать разнымъ лицамъ въ своемъ районѣ, чѣмъ будетъ отчасти достигаться рекламированіе нашего изданія, а также по доставленію объявленій.

Дѣло основано на широкомъ довѣріи, а потому никакихъ затратъ, залоговъ и обезпеченій отъ агентовъ не требуется.

Никакая служба, никакой родъ занятій не могутъ служить препятствіемъ къ поступленію въ число агентовъ-сотрудниковъ, наоборотъ—это желательно даже. Размѣръ настоящаго объявленія не позволяетъ изложить всѣхъ подробностей, а потому лицу, пожелавшему вступить въ число агентовъ-сотрудниковъ, необходимо обратиться въ контору газеты, и ему будутъ высланы подробныя разъясненія, матеріалы и документы.

При обращеніи въ контору просимъ ссылаться на настоящее объявленіе или послать его вырѣзку.

Въ теченіе первыхъ мѣсяцевъ не является возможнымъ учесть продуктивность труда каждаго агента, въ виду чего контора **на собственный рискъ принимаетъ агентовъ-сотрудниковъ на годичный срокъ.**

Примѣчаніе. Во избѣжаніе безполезнаго и значительнаго матеріальнаго ущерба отъ запросовъ лицъ, обращающихся въ контору газеты лишь изъ простого любопытства или съ цѣлью получить безплатно газету и прочій матеріалъ, предлагаемъ желающимъ вступить въ число агентовъ-сотрудниковъ одновременно съ своимъ предложеніемъ выслать конторѣ газеты, въ возмѣщеніе почтовыхъ и прочихъ расходовъ по пересылкѣ газетъ, документовъ и т. п., почтовыхъ марокъ на 50 копеекъ, каковая сумма **обязательно будетъ возвращена** по заключеніи нотаріальнаго договора.

Адресъ для писемъ: Иркутскъ, Контора газеты «Сибирскій Торгово-Промышленный Вѣстникъ», Почтамтская ул., № 18.
Адресъ для телеграммъ: Иркутскъ, Капиталъ.

Просьба не смѣшивать съ новой газетой „Сибирь и Торговля“, также издающейся въ г. Иркутскѣ. 243. 1—1

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лоирсъ-Меликовская улица, домъ казенный